Հ. Ս. Խ. Հ.

# ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

ԱՌ 1 ԱՊՐԻԼԻ 1932 Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն 1932

1 1 NOV 2017
343(47.925)

Հ. Ս. Խ. Հ.

# ՔՐԵԱԿԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔ

ԱՌ 1 ԱՊՐԻԼԻ 1932 Թ. ԸՆԴՐԻՆՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Հ. Ս. Խ. Հ. ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՐԽԻՎ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ Հ. Ս. Խ. Հ. ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆԻ
1932
ՅԵՐԵՎԱՆ

11-26112գր

Պետհրատի տպարան

Պատվեր 2416. Գլավլիտ 7856 (բ). Տիրաժ 1000

# 74. ՎՈՐՈՇՈՒՄ

## ՀՍԽՀ 5-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՀՍԽՀ Քրեական Որենսգիրքը 1927 թ. խմբագրությամբ կիրարկության դնելու մասին.

1927 թ. Սեպտեմբերի 18—ին.

*Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի 2-րդ նստաշրջանը վորոշում է.*

*1. Կիրարկության դնել ՀՍԽՀ Քրեական Որենսգիրքն Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատի առաջարկած խմբագրությամբ 1927 թ. Նոյեմբերի 1—ից:*

*2. Սահմանել Որենսգրքի կիրառման հետևյալ կարգն այն գործերի վերաբերմամբ, վորոնք ծագել են մինչև նոր որենսգիրքը կիրարկության դնելը:*

*ա. Նախնական քննության կամ հետաքննության շրջանում գտնվող այն արարքների վերաբերյալ գործերը, վորոնք համաձայն Նոր Որենսգրքի հանցավոր են համարվում, կարճվում են Քրեական Դատավարության Որենսգրքի 203 և 222 հոդվածների կարգով:*

*բ. Այդպիսի արարքների վերաբերյալ դատարան մտած գործերը կարճվում են վերջինի կողմից տնորինական նիստում.*

*գ. Նույն արարքների վերաբերյալ գործերը, վորոնք քննված են 1—ին ինստանցիայի դատարանում, կարճվում են վճռաբեկ ինստանցիայի կողմից տնորինական նիստում:*

*դ. Նույն արարքների վերաբերյալ գործերը, վորոնց նկատմամբ դատավճիռը մտել է ուժի մեջ, Քրեական Դատավարության Որենսգրքի 461 հոդ. նախատեսնված կարգի համաձայն վերաքննվում են դատարանների տնորինական նիստերում, վորոնք կայացնում են վորոշումներ՝ դատապարտվածներին դատավճռով սահմանված սոցիալական պաշտպանության միջոցի հետագա կիրառումից ազատելու մասին:*

*ե. Այն գործերի վերաբերմամբ, վորոնցով դատապարտվածի նկատմամբ սահմանված է սոցիալական պաշտպանության այնպի-*

մի միջոց, որը գերազանցում է տվյալ հանցագործության համար նոր Օրենսգրքով սահմանված առավելագույն սահմանը, կամ սոցիալական պաշտպանության միջոցն ավելի ծանր է քան այն, որ նոր Օրենսգրքով նախատեսնված է տվյալ հանցանքի համար, դատավճռով սահմանված սոցիալական պաշտպանության միջոցի համապատասխան իջեցում մինչև տվյալ հանցագործության համար նոր Օրենսգրքով որոշված առավելագույն սահմանը, կամ սոցիալական պաշտպանության միջոցի փոխարինումն ավելի մեղմ միջոցով՝ կատարվում է Վճռաբեկ Ինստանցիայի կողմից, յեթե դատավճիռը չի մտել իր ուժի մեջ, իսկ մնացած դեպքերում համաձայն այն կարգի, որը սահմանված է Քրեական Դատավարության Օրենսգրքի 461 հոդվածով:

3. Այն դեպքերում, յերբ տվյալ գործով մեղադրվողները կամ դատապարտվածները գտնվում են կալանքի տակ, Օրենսգիրքը նախորդ հոդվածի կարգով կիրառվում է մեկ ամսվա ընթացքում այն պահից, յերբ տեղերում կստացվի այս Օրենսգիրքը նոր խմբագրությամբ:

Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
Նախագահ՝ Ա. ԿԱՐԻՆՅԱՆ
Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի
քարտուղար՝ Ռ. ԴԱՇՏՈՅԱՆ

ՅԵՐԵՎԱՆ



# ՀՍԽՀ ՔՐԵԱԿԱՆ ՈՐԵՆՍԳԻՐՔ

1927 թ. խմբագրությամբ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍ

### ԲԱԺԻՆ 1

### ՀՍԽՀ ՔՐԵԱԿԱՆ ՈՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. ՀՍԽՀ Քրեական Օրենսդրության նպատակն է՝ աշխատավորների պետության դասակարգային—իրավական պաշտպանությունը հանրության համար վտանգավոր արարքներից (հանցագործություններից), վորոնք խախտում են աշխատավորների իշխանությունը կամ նրա սահմանած իրավակարգը. այդ պաշտպանությունն իրականացվում է օրինազանցների նկատմամբ այս Օրենսգրքի մեջ սահմանված սոցիալական պաշտպանության միջոցների կիրարկությամբ:

### ԲԱԺԻՆ 2

### ՔՐԵԱԿԱՆ ՈՐԵՆՍԳՐՔԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

2. Այս Օրենսգրքի ուժը տարածվում է ՀՍԽՀ այն բոլոր քաղաքացիների վրա, վորոնք հանրության համար վտանգավոր արարքներ են կատարել ՀՍԽՀ սահմաններում, նաև յեթե այդ արարքները կատարել են ԽՍՀ Միության սահմաններից դուրս, յեթե այս դեպքում նրանք ձերբակալվեն ՀՍԽՀ տերիտորիայի վրա:

3. Միութենական այլ հանրապետությունների քաղաքացիները ՀՍԽՀ տերիտորիայի վրա գործած հանցանքների համար յենթարկվում են պատասխանատվության ՀՍԽՀ օրենքներով, այլ և այն հանցանքների համար, վոր նրանք գործել են ԽՍՀ Միության սահմաններից դուրս, յեթե ձերբակալվել և դատի կամ քննության են հանձնվել ՀՍԽՀ տերիտորիայի վրա:

ԽՍՀ Միության սահմաններում գործած հանցանքների համար միութենական հանրապետությունների քաղաքացիները յենթարկվում են պատասխանատվության հանցագործության կատարման վայրի օրենքներով:

4. ԽՍՀ Միության տերիտորիայի վրա գործած հանցանքների համար ոտարյերկրացիները յենթարկվում են պատասխանատվության հանցագործության կատարման վայրի որենքներով:

5. Արտերկրության իրավունք վայելող ոտարյերկրացիների քրեական պատասխանատվության հարցը լուծվում է ամեն անգամ դիվանագիտական կարգով:

## ԲԱԺԻՆ 3

## ՀՍԽՀ ՔՐԵԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

6. Հանրության համար վտանգավոր արարք է համարվում ամեն մի այնպիսի գործողություն կամ անգործություն, վոր ուղղված է խորհրդային հանրակարգի դեմ, կամ խանգարում է այն իրավակարգը, վոր սահմանված է Բանվորա—գյուղացիակ. իշխանության կողմից, դեպի կոմունիստական հասարակարգը տանող անցողական ժամանակաշրջանի համար:

Ծանոթություն.—Հանցագործություն չի համարվում այն արարքը, վորը թեև ձևականորեն համապատասխանում է այս Օրենսգրքի հատուկ մասի այս կամ այն հոդվածի նշաններին, սակայն իր նվազ կարևորության և վտանգավոր հետևանքների բացակայության շնորհիվ հանրության համար վտանգավոր արարքի բնույթ չունի:

7. Հանրության համար վտանգավոր արարքներ գործած անձանց կամ այնպիսիների վերաբերմամբ, վորոնք հանցավոր միջավայրի հետ կապ ունենալու և կամ իրենց անցյալ հանցավոր գործունեության շնորհիվ վտանգ են ներկայացնում, կիրառվում են դատական—ուղղիչ, բժշկական և կամ բժշկա—դաստիարակչական բնույթ ունեցող սոցիալական պաշտպանության միջոցներ:

8. Յեթե տվյալ կոնկրետ արարքը, վորը գործելու պահին այս Օրենսգրքի 6—րդ հոդ. համաձայն հանցանք էր հանդիսանում, գործի նախաքննության կամ դատաքննության պահին այլևս կորցրել է հանրության համար վտանգավոր արարքի բնույթը կամ քրեական օրենքի փոփոխության հետևանքով կամ սոսկ սոցիալ—քաղաքական պայմանների փոփոխության փաստի պատճառով, կամ յեթե այդ արարքը կատարող անձն այդ պահին դատարանի կարծիքով այլևս չի կարող հանրության համար վտանգավոր ճանաչվել,— ապա այդ դեպքում հիշյալ արարքը կատարողի նկատմամբ սոցիալական պաշտպանության միջոցներ չեն կիրառվում:

9. Սոցիալական պաշտպանության միջոցները կիրառվում են ա. արդեն իսկ հանցանք գործած անձանց կողմից նոր հանցագործությունները կանխելու, բ. հասարակության այլ անկայուն տարրերի վրա ներգործելու, գ. հանցանք գործած անձանց աշխա-



տավորների պետության համակեցության պայմաններին ընտելացնելու նպատակով:

Սոցիալական պաշտպանության միջոցները ֆիզիկական տանջանք պատճառելու կամ մարդկային արժանապատվությունը ստորացնելու նպատակ ունենալ չեն կարող և վրեժխնդրության կամ պատժի նպատակ չեն առաջադրում:

10. Հանրության համար վտանգավոր արարքներ գործած անձանց նկատմամբ դատական ուղղիչ բնույթ ունեցող սոց. պաշտպանության միջոցները կիրառվում են միմիայն այն դեպքերում, յերբ այդ անձերը—

ա. գործել են դիտավորյալ կերպով, այսինքն՝ նախատեսել են իրենց գործողությունների հանրության համար վտանգավոր հետևանքները, ցանկացել են այդ հետևանքները, կամ գիտակցաբար թույլ են տվել նրանց իրագործումը, կամ՝

բ. գործել են անզգուշաբար, այսինքն՝ չեն նախատեսել իրենց գործողությունների հետևանքները, թեև պետք է նախատեսեյին, կամ թեթևամտությամբ հույս են ունեցել կանխելու այդ հետևանքները:

11. Դատական—ուղղիչ բնույթ ունեցող սոցիալական պաշտպանության միջոցները չեն կարող կիրառվել այն անձանց վերաբերմամբ, վորոնք հանցանք են գործել քրոնիկական հոգեկան հիվանդության կամ հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման վիճակում կամ այնպիսի հիվանդագին վիճակում, վոր չեյին կարող իրենց հաշիվ տալ իրենց գործողությունների համար կամ ղեկավարել այդ գործողությունները. Նմանապես չեն կարող կիրառվել այդ միջոցները նաև այն անձանց վերաբերմամբ վորոնք թեև գործել են հոգեկան հավասարակշռության վիճակում, բայց դատավճիռ կայացնելու պահին հիվանդացել են հոգեկան հիվանդությամբ:

Այդ անձանց վերաբերմամբ կարող են կիրառվել միայն բժշկական բնույթ ունեցող միջոցներ:

Ծանոթություն.—Այս հոդվածը չի տարածվում այն անձանց վրա, վորոնք հարբած վիճակում են հանցանք գործել:

12. Սոցիալական պաշտպանության դատական—ուղղիչ բնույթ ունեցող միջոցները չի կարելի կիրառել մինչև 14 տարեկան փոքրահասակների նկատմամբ, վորոնց վերաբերմամբ կարելի յե կիրառել միայն բժշկա—դաստիարակչական բնույթ ունեցող սոցիալական պաշտպանության միջոցներ:

14—ից 16 տարեկան անչափահասների նկատմամբ դատական—ուղղիչ բնույթ ունեցող սոցիալական պաշտպանության միջոցները կարող են կիրառվել այն դեպքում միայն, յերբ անչափահասների գործերը քննող հանձնաժողովն անկարելի կհամարի նրանց նկատմամբ սոցիալական պաշտպանության բժշկա—դաստիարակչական միջոցների կիրառությունը:

13. Սոցիալական պաշտպանության դատական—ուղղիչ բնույթ ունեցող միջոցները բնավ չեն կիրարկվում հանրության համար վտանգավոր արարքներ գործած անձանց նկատմամբ, յեթե դատարանը կգտնի, որ այդ գործողությունները կատարված են Խորհրդային Իշխանության կամ պաշտպանվողի կամ այլ անհատի իրավունքների և անձի դեմ տեղի ունեցած վոտնձգություններից անհրաժեշտորեն պաշտպանվելու վիճակում, յեթե միայն այդ պաշտպանությունն անհրաժեշտության սահմանից չի անցել:

Սոցիալական պաշտպանության դատական—ուղղիչ բնույթ ունեցող միջոցները չեն կիրարկվում նաև այն դեպքում, յերբ նույն այդ գործողությունները կատարվել են մի այնպիսի վտանգ կանխելու համար, վորի առաջը չէր կարելի առնել տվյալ հանգամանքներում վորևէ այլ միջոցներով, յեթե միայն հասցրած վնասն ավելի նվազ կարևորություն ունի, քան այն, վորի առջև առնվել է:

14. Քրեական հետապնդությունը տեղի ունենալ չի կարող

ա. յեթե այն հանցագործությունից հետո, վորի համար դատարանը կարող է նշանակել ազատազրկում 5 տարուց ավելի ժամանակով, անցել է արդեն 10 տարի.

բ. յեթե այն հանցագործությունից հետո, վորի համար դատարանը կարող է նշանակել ազատազրկում 5 տարուց վոչ ավելի ժամանակով, անցել է արդեն հինգ տարի.

գ. յեթե այն հանցագործությունից հետո, վորի համար դատարանը կարող է նշանակել ազատազրկում մինչև մեկ տարի ժամանակով, կամ վորի համար օրենքն ավելի մեղմ սոցիալական պաշտպանության միջոց է սահմանել՝ քան ազատությունից զրկելը, անցել է արդեն յերեք տարի:

Վաղեմությունը կիրարկվում է, յեթե համապատասխան ժամանակի ընթացքում տվյալ գործի մասին վոչ մի գործ կամ քննություն չի յեղել. վաղեմության ընթացքն ընդհատվում է, յեթե հանցանք գործող անձը վաղեմության համապատասխան ժամանակի ընթացքում ուրիշ համանման կամ վոչ պակաս ծանր հանցանք կգործի կամ կխուսափի դատից և քննությունից: Այս դեպքերում վաղեմության ժամանակամիջոցներն սկսվում են յերկրորդ հանցագործությունը կատարելու, կամ կասեցրած քննությունը վերանորոգելու որից:

Ծանոթություն 1.—Յեթե մեկը քրեական պատասխանատվության է յենթարկվում հակահեղափոխական հանցանքների համար, վաղեմության կիրարկումը վորոշվում է ամեն անգամ դատարանի հայեցողությամբ: Սակայն յեթե դատարանը հնարավոր չհամարի վաղեմության կիրարկումը, ապա՝ նշանակելով տվյալ հանցանքի համար գնդակահարություն, այդ պետք է անպայման փոխարինի աշխատավորների թշնամի հայտարարելով, ՀՍԽՀ, իսկ դրա հետ նայեվ ԽՍՀ Միության քաղաքացիությունից զրկելով և ընդմիշտ վտարելով ԽՍՀ Միության սահմաններից, կամ՝ ազատությունից զրկելով յերկու տարուց վոչ պակաս ժամանակով:



Ծանոթություն 2.— Այն անձանց վերաբերմամբ, վորոնք քրեական պատասխանատվության են յենթարկվում բանվոր դասակարգի և հեղափոխական շարժման դեմ ցարական իրավակարգի օրով կամ հակահեղափոխական կառավարությունների մոտ քաղաքացիական կռիվների շրջանում պատասխանատու կամ գաղտնի պաշտոններ վարելու ընթացքում ակտիվ պայքար մղելու համար,—թե վաղեմության կիրարկումը և թե սոցիալական պաշտպանության միջոցի առավելագույն չափի—գնդակահարության փոխարինումը թողնվում է դատարանի հայեցողության:

Ծանոթություն 3.— Այս հոդվածով սահմանված վաղեմության ժամանակամիջոցները չեն տարածվում այն գործողությունների վրա, վորոնք այս Օրենսգրքի համաձայն հետապնդվում են վարչական կարգով, և այդ գործողությունների համար վարչական կարգով հետապնդելը կարող է տեղի ունենալ գործողությունը կատարելու օրից սկսած միայն մեկ ամսվա ընթացքում:

14ա. Դատվածություն չունեցողներ են համարվում՝

ա) դատարանով արդարացած անձինք.

բ) պայմանականորեն դատապարտված անձինք, վորոնք դատարանի կողմից նշանակված փորձաշրջանի տևողության ընթացքում նոր հանցանք չեն գործել.

գ) վեց ամսից վոչ ավելի ժամանակով ազատազրկության կամ սոցիալական պաշտպանության ուրիշ վորևէ ավելի մեղմ միջոցի դատապարտված անձինք, վորոնք նրանց վերաբերմամբ կիրարկված սոցիալական պաշտպանության համապատասխան միջոցը կրելուց հետո, յերեք տարվա ընթացքում նոր հանցանք չեն գործել, ինչպես նաև վեց ամսից ավելի, սակայն վոչ ավելի քան յերեք տարով ազատազրկության դատապարտվածները, վորոնք վեց տարվա ընթացքում նոր հանցանք չեն գործել:

15. Մեղադրական դատավճիռը բնավ ի կատար չի ածվում, յեթե ի կատար չի ածվել դատավճիռ կայացնելուց հետո տաս տարվա ընթացքում:

16. Յեթե հանրության համար վտանգավոր այս կամ այն արարքներն այս Օրենսգրքով ուղղակի կերպով չեն նախատեսված, այդ դեպքում պատասխանատվության հիմունքները և սահմանները, ինչպես նաև սոցիալական պաշտպանության միջոցները դատարանի կողմից կիրարկվում են համաձայն այս Օրենսգրքի այն հոդվածների, վորոնք նախատեսնում են իրենց կարևորությամբ ու տեսակով առավելապես նման հանցանքներ:

17. Սոցիալական պաշտպանության դատական–ուղղիչ բնույթ ունեցող միջոցները կիրարկվում են հավասարապես ինչպես հանցանք գործած անձանց–կատարողների, այնպես էլ նրանց մասնակիցների՝ դրդիչների և օժանդակիչների վերաբերմամբ:

Օժանդակիչներ են համարվում այն անձինք, որոնք իրենց խորհուրդներով, ցուցմունքներով, միջոցներ տրամադրելով և խոչընդոտները վերացնելով աջակցում և նպաստում են հանցագործությունը գլուխ բերելուն կամ հանցավորին կամ հանցանքի հետքերը թաքցնելուն:

18. Սոցիալական պաշտպանության դատական—ուղղիչ բնույթ ունեցող միջոցները որոշվում են մասնակցողներից յուրաքանչյուրի վերաբերմամբ, նկատի առնելով ինչպես նրանցից ամեն մեկի մասնակցության չափը տվյալ հանցագործության մեջ, այնպես էլ այդ հանցագործության և նրան մասնակցող անձի վտանգավորության աստիճանը:

Կատարված կամ պատրաստվող հանցագործության մասին չհայտնելու համար սոցիալական պաշտպանության դատական—ուղղիչ բնույթ ունեցող միջոցներ կիրարկվում են միմիայն այս Որենսգրքով առանձնապես հիշատակված դեպքերում:

19. Յեթե սկսած հանցագործությունը (անկախ այն հանգամանքից, թե որ շրջանում է յեղել «նախապատրաստության» թե «հանցավորը կատարելու») մինչև վերջը չի հասցրած, այսինքն՝ յեթե հանցավոր հետևանքը որևե պատճառով չի առաջացել, ապա դատարանն ընտրում է սոցիալական պաշտպանության այն միջոցը, որ այս Որենսգրքում մատնանշված է հանցագործության տվյալ տեսակի համար, նկատի ունենալով հանցանքը կատարած անձի վտանգավորությունը և հանցավոր դիտավորության իրագործման աստիճանը:

## ԲԱԺԻՆ 4

## ՀԱՆՑԱՆՔ ԳՈՐԾՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ՈՐԵՆՍԳՐՔՈՎ ԿԻՐԱՐԿՎՈՂ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

20. Սոցիալական պաշտպանության դատական—ուղղիչ բնույթի միջոցներն են՝

ա) աշխատավորների թշնամի հայտարարելը, զրկելով ԽՍՀՄ քաղաքացիությունից և ընդմիշտ արտաքսելով ԽՍՀՄ սահմաններից.

բ) ազատությունից զրկելն ուղղիչ—աշխատանքային ճամբարներում և ԽՍՀՄ հեռավոր վայրերում.

գ) ազատությունից զրկելն ընդհանուր կալանավայրերում.

դ) հարկադիր աշխատանքներ, առանց ազատազրկության.

ե) իրավունքների սահմանափակում.

զ) ԽՍՀՄ սահմաններից որոշ ժամանակով հեռացնելը.

է) ԱՍՖԽՀ և ՀՍԽՀ սահմաններից կամ առանձին վայրերից հեռացնելը, այս կամ այն վայրում բնակեցնելով կամ առանց դրան, արգելելով այս կամ այն վայրում բնակվելը կամ առանց այդ արգելքի.



թ) պաշտոնից արձակելը.

ժ) այս կամ այն պաշտոնը վարելը կամ այս կամ այն գործունեությամբ կամ արհեստով զբաղվելն արգելելը.

ի) հասարակական պարսավանք.

լ) գույքի զրավում.

խ) տուգանք և

ծ) նախազգուշացում.

21. Խորհրդային իշխանության հիմունքներին և Խորհրդային համակարգին սպառնացող հանցագործությունների ամենածանր տեսակների դեմ պայքարելու համար այս Որենսգրքի հոդվածներով հատկապես մատնանշված դեպքերում՝ մինչև ԽՍՀ Միության Կենտրոնական Գործադիր կոմիտեյի կողմից վերացվելը, որպես աշխատավորների պետության պաշտպանության բացառիկ միջոց կիրարկվում է գնդակահարություն:

22. Գնդակահարություն չի կարելի կիրարկել հանցանք գործելու պահին դեռևս 18 տարին չլրացած անձանց, այլ և հղի կանանց վերաբերմամբ:

23. Աշխատավորների թշնամի հայտարարելն իր հետևանքներով, ազատությունից զրկելը և հարկադիր աշխատանքներն առանց ազատությունից զրկելու դատական—ուղղիչ բնույթ ունեցող սոցիալական պաշտպանության այն հիմնական միջոցներն են հանդիսանում, որոնք կիրարկվում են հանցանք գործած անձանց վերաբերմամբ:

Այս Որենսգրքի 20-րդ հոդվածում մատնանշված սոցիալական պաշտպանության մնացած միջոցները՝ բացի նախազգուշացումից և գույքի զրավումից, կարող են կիրարկվել որպես ինքնուրույն միջոցներ, ինչպես նայև զուգակցվել հիմնականներին՝ որպես լրացուցիչ միջոցներ:

Գույքի զրավումը, որպես սոցիալական պաշտպանության լրացուցիչ միջոց՝ դատարանի կողմից կարող է կիրարկվել միայն այն դեպքերում, որոնք հատկապես նախատեսնված են այս Որենսգրքի հոդվածներով:

24. Սոցիալական պաշտպանության բժշկական բնույթ ունեցող միջոցներն են՝

ա) պարտադիր բժշկություն.

բ) բժշկական հիմնարկության մեջ դետեղելը՝ մեկուսացման յենթարկելով:

25. Սոցիալական պաշտպանության բժշկական—դաստիարակչական միջոցներ են հանդիսանում.—

ա) անչափահասներին ծնողների կամ ազգականների խնամքին հանձնելը, յեթե նրանք ի վիճակի յեն խնամելու նրանց, կամ թե՝ այլ անձանց, հաստատությունների և կազմակերպությունների խնամքին հանձնելը.

բ) հատուկ բժշկական—դաստիարակչական հիմնարկության մեջ դետեղելը:

26․ Սոցիալական պաշտպանության բժշկական-դաստիարակչական և բժշկական բնույթ ունեցող միջոցները դատարանը կարող է կիրառել, յեթե դատական-ուղղիչ բնույթ ունեցող սոցիալական պաշտպանության միջոցների կիրառկությունը տվյալ դեպքին անհամապատասխան կհամարի, այլև՝ վորպես լրացում վերջինների նկատմամբ, յեթե միայն համապատասխան մարմինները դատաքննությունից առաջ բժշկական-դաստիարակչական և բժշկական բնույթ ունեցող սոցիալական պաշտպանության միջոցներ չեն կիրառել:

27․ Աշխատավորների թշնամի հայտարարելը և ԽՍՀ Միության սահմաններից արտաքսելը՝ Միության քաղաքացիությունից զրկելով կարող է կիրառվել միմիայն ընդմիշտ:

28․ Ազատազրկությունը ԽՍՀՄ հեռավոր վայրերի ուղղիչ աշխատանքային ճամբարներում սահմանվում է յերեքից մինչև տաս տարի ժամանակով: Ազատազրկությունն ընդհանուր կալանավայրերում սահմանվում է մինչև յերեք տարի ժամանակով: Ընդհանուր կալանավայրերում ազատազրկության դատապարտված անձինք ազատազրկությունը կրում են ուղղիչ աշխատանքային գաղութներում՝ ընդհանուր կանոնի համաձայն:

Բացառիկ դեպքերում, յեթե դատապարտվածն իր սոցիալական վտանգավորության աստիճանով չի պահանջում ուղղիչ աշխատանքային ճամբար ուղարկել, կամ բոլորովին անպետք է ֆիզիկական աշխատանքի համար, դատարանն իրավունք ունի, դատավճռի մեջ հատուկ վորոշում մտցնելով, ճամբարը փոխարինել ընդհանուր կալանավայրով՝ նույն ժամանակամիջոցով:

29․ Նախնական ազատազրկությունը, ինչպես նաև դատավճռի հայտնելուց մինչև օրինական ուժի մեջ մտնելը կալանքի տակ մնալու ժամանակամիջոցն անպայման հանվում է դատարանի վորոշած ազատազրկության ժամանակամիջոցից: Այս Օրենսգրքի 20 հոդ. «դ», «ե», «զ», «ը», «թ», «ժ», «ի» և «լ» կետերում մատնանշված սոցիալական պաշտպանության այլ միջոցներ կիրառելիս, դատարանն իրավունք ունի նկատի առնելու մինչև դատավճիռը տեղի ունեցած ազատազրկությունը:

30․ Հարկադիր աշխատանքներն առանց ազատությունից զրկելու նշանակվում են մեկ օրից մինչև մեկ տարի ժամանակով: Հարկադիր աշխատանքները՝ կիրառկելու հնարավորություն չլինելու դեպքում, դատարանի վորոշմամբ կարող են փոխարինվել ազատությունից զրկելով, հաշվելով հարկադիր աշխատանքների յերեք օրն ազատության մեկ օրին հավասար:

30 ա. Բանվորա-Գյուղացիական կարմիր բանակի զորամասերում անընդհատ ծառայության մեջ գտնվող կադրային, շարքային ու կրտսեր հրամանատարական կազմի ժամկետային ծառայության զինվորականները, վորոնք խաղաղ ժամանակ զինվորական հանցագործությունների համար դատապարտվել են յերկու ամ-



սից մինչև մեկ տարի ժամանակով ազատազրկման առանց իրա-
վունքների սահմանափակման՝ կրում են դատարանի նշանակած
սոցիալական պաշտպանության միջոցը Բանվորա-Գյուղացիական
կարմիր բանակի զինվորական ուղղիչ մասերում, իսկ մինչև յերկու
ամիս ժամանակով դատապարտվածները—զինվորականների համար
սահմանված կարգապահական կալանավորման կարգով:
Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի գրագետ ծառա-
յության մեջ գտնվող միջին, ավագ և կրտսեր կադրային հրա-
մանատարական կազմի զինվորականների, ինչպես նաև բանվորա-
գյուղացիական կարմիր բանակի ժամկետային ծառայության մեջ
գտնվող կադրային, շարքային ու կրտսեր զինվորականների նկատ-
մամբ առանց կալանքի հարկադիր աշխատանքներ չեն կիրառվում:
Այդ հարկադիր աշխատանքների փոխարեն հիշյալ զինվորական-
ների նկատմամբ կիրառվում է մինչև յերկու ամիս ժամանակով
ազատազրկում, վորը նրանք կրում են զինվորականների համար
սահմանված կարգապահական կալանավորման կարգով:
Ծանոթություն 1.—Այն դեպքերում, յերբ գործի համ-
գամանքների համեմատ Զինվորական Տրիբունալն աննպա-
տակահարմար է գտնում այս հոդվածի ներգործության յեն-
թակա անձանց զինվորական-ուղղիչ մասեր ուղարկելը,
իրավունք ունի վորոշում հանելու նրանց կալանավորման
ընդհանուր վայրեր ուղարկելու մասին:
Ծանոթություն 2.—Բացառիկ դեպքերում, ամեն ան-
գամ դատարանի հատուկ վորոշմամբ, ընդահուպ քրեական
հանցագործության համար խաղաղ ժամանակ յերկու ամսից
մինչև մեկ տարի ժամանակով ազատազրկման, առանց իրա-
վունքների սահմանափակման, դատապարտված ժամկետա-
յին ծառայության մեջ գտնվող կադրային, շարքային ու
կրտսեր հրամանատարական կազմի զինվորականներին թույ-
լատրվում է սոցիալական պաշտպանության միջոցը կրել
զինվորական-ուղղիչ մասերում, իսկ մինչև յերկու ամիս
ժամանակով դատապարտվածներին—զինվորականների հա-
մար սահմանված կարգապահական կալանավորման կարգով:
30. բ.—Յեթե Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակն անց-
նում է պատերազմական դրության, զինվորական-ուղղիչ մասերում
գտնվող զինվորական ծառայողներն ուղարկվում են գործող բա-
նակը, իսկ նշանակված սոցիալական պաշտպանության միջոց կրելը
հետաձգվում է մինչև պատերազմական գործողությունների վեր-
ջանալը:
Պատերազմի ժամանակ զինվորական ծառայողին առանց
իրավունքներից զրկելու ազատազրկության դատապարտող դա-
տավճռի կատարումը կարող է վճիռ կայացնող դատարանի վորոշ-
մամբ հետաձգվել մինչև պատերազմական գործողությունների վեր-

ջնալը, այն պայմանով, վոր դատապարտվածն ուղարկվի գործող բանակ:

Այս հոդվածի առաջին և յերկրորդ մասերում հիշատակված զինվորական ծառայողներին, յեթե նրանք գործող բանակում ցույց են տվել իրենց վորպես ԽՍՀ Միության տոկուն պաշտպաններ, համապատասխան զորամասի պետի միջնորդությամբ՝ դատավճիռ կայացնող դատարանը կարող է նշանակված սոցիալական պաշտպանության միջոցից իսպառ ազատել կամ նշանակված սոցիալական պաշտպանության միջոցը մեղմացնել:

31. Իրավունքների սահմանափակումը՝ զրկումն է—

ա) ակտիվ և պասիվ ընտրական իրավունքներից.

բ) հասարակական կազմակերպություններում ընտրովի պաշտոն վարելու իրավունքից.

գ) պետական այս կամ այն պաշտոնը վարելու իրավունքից.

դ) պատվավոր կոչումն ունենալու իրավունքից.

ե) ծնողական իրավունքներից.

զ) պետական ապահովության սոցիալական ապահովագրության կարգով թոշակ ստանալու և գործազրկության դեպքերում սոցիալական ապահովագրության կարգով նպաստ ստանալու իրավունքներից:

Իրավունքներից զրկելը դատապարտյալի վերաբերմամբ կարող է կիրառվել թե ամբողջությամբ, ընդգրկելով վերոհիշյալ բոլոր իրավունքները, և թե յուրաքանչյուրն առանձին:

Ծնողական իրավունքներից զրկելը («ե» կետ) դատարանի կողմից կարող է նշանակվել միայն այն դեպքում, յերբ հաստատվում է, վոր դատապարտյալն ի չարն է գործ դրել այդ իրավունքները:

Թոշակ և նպաստ ստանալու իրավունքից զրկելը (կետ «զ») դատարանը կարող է նշանակել այն դեպքերում՝

1.—յերբ մեղադրյալը շահադիտական հանցագործություններ կատարելու համար դատապարտվում է ազատազրկման մեկ տարուց ավելի ժամանակով, կամ յենթարկվում է վտարման վորոշ վայրից մի այլ վայրում բնակվելու պարտավորությամբ (վորպես սոցիալական պաշտպանության հիմնական միջոց).

2.—յերբ դատապարտյալի նկատմամբ, վորպես սոցիալական պաշտպանության միջոց, նշանակվում է ամբողջ գույքի գրավում.

3.—յերբ մեղադրյալը խաղաղ ժամանակ դատապարտվում է այս որենսգրքի 228, 239, 232,237, 238, 242, 245, 246, 247, 248 249, 250, 251, 252 և 253-րդ հոդվածներով նախատեսված հանցանքների համար, իսկ պատերազմի ժամանակ՝ 226—256 հոդվածներով նախատեսված բոլոր հանցանքների համար:

32. Իրավունքներից զրկելը կարող է նշանակվել վոչ ավելի՝ քան հինգ տարի ժամանակով:

Այն դեպքերում, յերբ իրավունքներից զրկելը նշանակվում է վորպես սոցիալական պաշտպանության լրացուցիչ միջոց՝ ազա-



տազրկության հետ միասին,—իրավազրկումը տարածվում է կալանքի ամբողջ տևողության և բացի դրանից դատավճռով սահմանված ժամանակի վրա:

33. Այս Օրենսգրքի 31-րդ հոդվածի «ա», «բ» և «գ» կետերով նախատեսված իրավունքներից զրկելը միաժամանակ զրկում է նաև Աշխատանքի և Կարմիր Դրոշի շքանշաններից:

ԽՍՀ Միության կամ դաշնակից հանրապետությունների Կենտրոնական Գործադիր Կոմիտեների կողմից շնորհած շքանշաններից կամ պատվավոր կոչումներից զրկելու յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է միջնորդել համապատասխան Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի Նախագահության առաջ շքանշանից կամ պատվավոր կոչումից զրկելու մասին:

Այլ շքանշաններից և պատվավոր կոչումներից զրկելը տեղի յե ունենում անմիջականորեն դատարանի վճռով:

34. Դատարանն ամեն անգամ, յերբ մեկ տարուց ավելի ժամանակով ազատությունից զրկելու վճիռ է կայացնում, պարտավոր է քննության առնել դատապարտյալին իրավունքներից զրկելու հարցը: Սոցիալական պաշտպանության ավելի մեղմ միջոց նշանակելիս իրավունքներից զրկելը չի թույլատրվում:

35. ԱՍՖԽՀ և ՀՍԽՀ սահմաններից կամ առանձին վայրերից հեռացնելու վորոշումն այս կամ այն վայրում բնակեցնելով կամ առանց դրան, այս կամ այն վայրերում բնակվելն արգելելով կամ առանց դրան, կայացնում է դատարանն այն անձանց նկատմամբ, վորոնք իրենց հանցավոր գործունեությամբ կամ հանցավոր միջավայրի հետ ունեցած կապով սոցիալապես վտանգավոր են համարվում տվյալ միջավայրի համար: Այդ միջոցները դատարանի կողմից դատախազության մարմինների առաջարկությամբ մատնանշված կատեգորիայի անձանց նկատմամբ կարող են կիրառվել անկախ այդ անձանց վորոշ հանցանքի համար դատական պատասխանատվության յենթարկելուց, ինչպես նաև այն դեպքերում, յերբ նրանք վորոշ հանցանք կատարելով՝ մեղադրանքից կարող են դատարանով արդարանալ, սակայն սոցիալապես վտանգավոր համարվել:

ԱՍՖԽՀ, ՀՍԽՀ սահմաններից կամ առանձին վայրից հեռացնելը վորոշվում է յերեքից մինչև տաս տարի ժամանակով: ԱՍՖԽՀ, ՀՍԽՀ և առանձին վայրերի սահմաններից հեռացնելը՝ այս կամ այն վայրում ապրելն արգելելով կամ առանց դրան, վորոշվում է մեկից մինչև հինգ տարի ժամանակով:

Յեթե սոցիալական պաշտպանության վերոհիշյալ միջոցները դատարանի կողմից նշանակվում են վորպես ազատազրկության նկատմամբ լրացուցիչ միջոցներ, դատարանի կողմից նշանակված ժամանակամիջոցը հաշվվում է կալանքը կրելու պահից:

Ուղղիչ աշխատանքային ճամբարներում ազատազրկության դատապարտված անձինք, վորոնք հետագայում պետք է հեռացվեն տվյալ վայրի սահմաններից և պարտադիր կերպով պետք է վերա-

նակվեն վորոշյալ վայրում, ազատազրկության ժամանակը լրանալուց հետո՝ այնքան ժամանակ քանի դեռ նրանք զրկված են նոր բնակավայր ընտրելու իրավունքից, բնակվում են ճամբարի շրջանում, վորտեղ նրանց հող է հատկացվում, կամ՝ վարձատրությամբ աշխատանք է տրվում:

36. ԽՍՀ Միության, ԱՍՖԽՀ և ՀՍԽՀ սահմաններից վորոշ ժամանակով հեռացնելը թույլատրվում է միայն համապատասխան օրենսդրությամբ հատկապես վորոշված կարգով:

Տվյալ վայրից հեռացնելն այլ վայրերում բնակվելու պարտավորությամբ կարող է կիրարկվել դատարանի կողմից միայն այս Օրենսգրքի 58-71 հոդվածներում, 73 հ. 1 մասի 3ա8 կետով, 74, 78, 79, 81, 84 հոդվածներով, 98 հ.-ի 2 մասով, 129 հոդ. 2 մասով, 133 հ. 2—րդ մասով, 155, 181 հոդվածներով, 193 հոդ. «գ» և «ե» կետերով, 195 հ. 2-րդ մասով, 196 հոդ. 3-րդ մասով, 197, 198, 249 և 251 հոդվածներով նախատեսված հանցանքների համար պատասխանատվության յենթարկելու դեպքերում:

Այն վայրերի ցուցակները, վորտեղ թույլ է տրվում պարտադիր կերպով բնակեցնել համաձայն դատարանի վճռի, վորոշվում են Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիսարիատի կողմից համաձայնեցնելով Արդարադատության Ժողովրդական Կոմիսարիատի հետ:

37. Պաշտոնանկությունը կիրարկվում է իբրև սոցիալական պաշտպանության միջոց այն դեպքում, յերբ դատարանն անկարելի յե համարում դատապարտյալին թողնել դատապարտության կամ հանցագործության ժամանակ վարած պաշտոնում: Միաժամանակ կարելի յե արգելել նրան այս կամ այն պաշտոնը վարել, սակայն վոչ ավելի, քան հինգ տարի ժամանակով:

38. Դատարանը վորոշում է վոչ ավելի, քան հինգ տարի ժամանակով արգելել այս կամ այն գործունեությամբ կամ արհեստով զբաղվելն այն դեպքում, յերբ դատապարտյալի՝ իր արհեստն ի չարը գործ դնելու պատճառով դատարանն անհնարին է համարում թույլ տալ, վոր նա իր զբաղմունքը շարունակի:

Մասնավորապես դատարանն իրավունք ունի վորոշում կայացնելու արգելելու դատապարտյալին ստանձնել պետական կապալառության և մատակարարության հանձնառություններ, գործարքներ կնքել պետական և հասարակական ձեռնարկությունների և հաստատությունների հետ, իր կողմից կամ այլ անձանց հանձնարարությամբ ղեկավարել առևտրական և հանձնակատարական ձեռնարկություններ և այլն:

39. Հասարակական պարսավանքն այն է, վոր դատապարտյալին հրապարակով դատարանի անունից պարսավանք է հայտնվում իր գործած հանցանքի համար, դատավճիռը դատապարտյալի հաշվով մամուլի մեջ հրապարակելով, կամ առանց հրապարակելու:

40. Գույքի գրավումն այն է, վոր դատարանի վճռով ամբողջապես կամ ճշտիվ վորոշված չափով հարկադիր և անվճար կերպով տարվում է հօգուտ պետության դատապարտյալի անձնական սեփականություն կազմող գույքը կամ ընդհանուր սեփականությունից նրան բաժին ընկնող մասը:



Գրավման յենթակա չեն.

ա. դատապարտյալի և նրա խնամքի տակ գտնվող անձի համար անհրաժեշտ հագուստը, սպիտակեղենը կամ կարասիքը և տնային այլ անհրաժեշտ առարկաները.

բ. դատապարտյալի անձնական, տնայնագործական և արհեստավորական աշխատանքի անհրաժեշտ գործիքները, այլև նրա անձնական պրոֆեսիոնալ աշխատանքի համար անհրաժեշտ գործիքները, ամեն տեսակ ձեռնարկները և գրքերը, յեթե սակայն, դատապարտյալը դատարանի վճռով տվյալ արհեստով զբաղվելու իրավունքից զրկված չէ.

գ. գյուղատնտեսական կենդանի և մեռյալ ինվենտարը, ինչպես նաև անասունների համար պատրաստված կերի պաշարը՝ թե մեկը և թե մյուսն այնպիսի քանակությամբ, վորն անհրաժեշտ է յերկրագործական աշխատավորական տնտեսությունը պահպանելու համար, սակայն գյուղացիական ծխի այդ անհրաժեշտ քանակությունից ավելի յեղած գույքից կարող է գրավվել միայն այն բաժինը, վոր պատկանում է ծխի հանցանք գործած անդամին և վորը նրան հասնում է գործող օրենքներով բաժանության համար սահմանված չափով.

դ. աշխատավորական յերկրագործական տնտեսության մեջ հերթական ցանքերի (աշնանացանի և գարնանացանի) համար անհրաժեշտ սերմացուն և չհավաքած բերքը, բացառությամբ արդյունաբեր այգիների և բանջարանոցների բերքի, յեթե այդ այգիների և բանջարանոցների շահագործումն աշխատավորական բնույթ չունի.

ե. գյուղական վայրերում դատապարտյալի ընտանիքի բնակության համար անհրաժեշտ բնակելի և այլ օժանդակ շինությունները, այլ և այն բոլոր շինությունները, վորոնք գյուղական տնտեսության անհրաժեշտ պատկանելիքն են կազմում.

զ. դատապարտյալի, նրա ընտանիքի և նրա խնամքի տակ գտնվող անձանց անձնական կարիքների համար անհրաժեշտ վեց ամսվա սննդանյութը և վառելանյութը.

ը. այս հոդվածի ծանոթության մեջ հիշատակված կարգով և չափով սահմանվող դրամական միջոցները.

թ. գյուղատնտեսական [illegible] կոոպերատիվ կազմակերպություններում և աշխատանքի [illegible]ներում ունեցած փայավճարները:

Ծանոթություն.—Այս հոդվածի «ա». «բ». «գ». «դ». «զ» և «ը» կետերում [illegible] և գրավման վոչ յենթակա առարկաների [illegible] և տեսակը սահմանվում է հատուկ օրենսդրու[illegible]

Ծանոթություն. 2.—Կուլակային տնտեսություններում գրավման ենթակա չէ միայն այն գույքը, որի վերաբերմամբ չի կարելի հարկերի համար գանձում կատարել (հարկեր գանձելու մասին կանոնադրության 17-րդ հոդվածի ծանոթություն ԽՍՀՄ օր. կար. ժող. 1929 թ. № 71, հոդ. 672):

Գույքը գրավելիս պետությունը պատասխանատու չէ գույքի վրա ընկնող պարտքերի ու պարտավորությունների համար, եթե դրանք առաջ են եկել նախքան քննչական և դատական մարմինների կողմից գույքի պահպանության միջոցներ ձեռք առնելը և առանց գույքի պահպանության միջոցներ ձեռք առած մարմնի համաձայնության:

Գրավված գույքի հաշվին բավարարման ենթակա պահանջների համար պետությունը պատասխանատու է միայն ակտիվի սահմաններում, պահպանելով պահանջների բավարարման հերթականության՝ Քաղաքացիական և Քաղաքացիական Դատավարության Օրենսգրքերով սահմանված կարգը:

42. Տուգանքը դրամական բռնագանձում է, որ նշանակվում է դատարանի կողմից այս օրենսգրքի որոշ հոդվածներով մատնանշված սահմաններում, իսկ եթե այդպիսին լրացուցիչ միջոց է, ապա դատարանի հայեցողությամբ:

Համենայն դեպս տուգանքը նշանակվում է դատապարտյալի նյութական վիճակի համեմատ:

Տուգանք որոշելիս դատարանը կարող է որոշում կայացնել չվճարելու դեպքում տուգանքը փոխարինել հարկադիր աշխատանքներով առանց ազատությունից զրկելու, հաշվելով մեկ ամսվա հարկադիր աշխատանքը հարյուր ռուբլու հավասար: Ազատազրկությունը տուգանքով, կամ տուգանքն ազատությունից զրկելով փոխարինել չի թույլատրվում:

Այն առարկաները, որոնք այս Օրենսգրքի 40—րդ հոդ. համաձայն գրավելի չեն հօգուտ պետության, չի կարելի առնել նաև տուգանքը գանձելիս:

43. Դատարանը նախազգուշացումը կիրառում է միմիայն արդարացուցիչ վճիռ կայացնելիս, երբ գտնում է, որ արդարացվածի վարքն այնուամենայնիվ տեղիք է տալիս կասկածելու թե նա հանցանք կարող է գործել ապագայում:

44. Վնասը հատուցանելու պարտավորությունը դրվում է դատապարտյալի վրա այն դեպքերում, երբ դատարանը նպատակահարմար է գտնում, որ հենց ինքը դատապարտյալը վերացնի իր կատարած իրավախախտման հետևանքները, կամ հատուցի պատճառած վնասները:

Սոցիալական պաշտպանության այս միջոցը, սակայն, չի կարող ավելի ծանր լինել, քան այն, որ դատավճռով նշանակված է որպես սոցիալական պաշտպանության հիմնական միջոց:



## ԲԱԺԻՆ 5

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

45. Դատապարտյալին սոցիալական պաշտպանության միջոց նշանակելիս դատարանը ղեկավարվում է.—

ա) այս Օրենսգրքի ընդհանուր մասի ցուցմունքներով,

բ) այն սահմաններով, որոնք մատնանշված են հանցանքի տվյալ տեսակը նախատեսնող հատուկ մասի հոդվածի մեջ.

գ) իր սոցիալիստական իրավագիտակցությամբ, նկատի ունենալով կատարված հանցագործության հանրային վտանգավորությունը, գործի հանգամանքները և հանցանք գործողի անձնավորությունը:

46. Այս Օրենսգրքով նախատեսված հանցանքները բաժանվում են.—

ա) հանցանքների, որոնք ուղղված են ԽՍՀ Միության մեջ բանվորների և գյուղացիների իշխանությամբ հաստատված Խորհրդային հանրակարգի դեմ, որի հետևանքով և ճանաչվում են առավելապես վտանգավոր,

բ) բոլոր մնացած հանցանքները:

Առաջին կարգի հանցանքների նկատմամբ Օրենսգիրքը որոշում է այն սահմանը, որից պակաս սոցիալական պաշտպանության միջոց դատարանն իրավունք չունի նշանակելու:

Բոլոր մնացած հանցանքների նկատմամբ Օրենսգիրքը որոշում է դատարանի համար թույլատրելի առավելագույն սահմանը:

47. Դատարանը սոցիալական պաշտպանության միջոցը որոշելիս ամենից առաջ պարզում է տվյալ հանցագործության հասարակականորեն-վտանգավորության հարցը, որից հետո սոցիալական պաշտպանության կոնկրետ միջոցը որոշելիս ավելի խիստ միջոց է կիրարկում՝

ա) եթե հանցանքը կատարվել է բուրժուազիայի իշխանությունը վերականգնելու նպատակով.

բ) եթե հանցանքը թեև անմիջականորեն ուղղված չէ խորհրդային պետության կամ աշխատավորության շահերի դեմ, սակայն իր օբյեկտիվ հետևանքներով կարող է վնասել այդ շահերին.

գ) եթե հանցանքը կատարել է մի խումբ կամ բանդա.

դ) եթե հանցանքը կատարել է առաջ արդեն որևէ հանցանք գործած անձ, բացի այն դեպքերից, երբ տվյալ անձը համարվում է չդատված (14 ա. հոդված), կամ եթե առաջին հանցանքը կատարելու կամ նրա համար դատավճիռ կայացնելու պահից անցել են վաղեմության ժամանակամիջոցները (14 հոդ.): Սակայն, դատարանն իրավունք ունի, նայած առաջին հանցագործության բնույթին, նրան ծանրացնող նշանակություն չտալու.

ե) եթե հանցանքը կատարված է շահադիտական կամ այլ ստոր նպատակներից դրդված կամ հանցագործին յենթակա կամ նրա խնամքի տակ գտնված անձանց, կամ հասակի կամ այլ հանգամանքների շնորհիվ առանձնապես անօգնական վիճակում գտնված անձանց նկատմամբ.

զ) յեթե հանցանքը կատարված է առանձին անգթությամբ, բռնությամբ կամ խորամանկությամբ:

48. Սոցիալական պաշտպանության այս կամ այն միջոցը նշանակելիս մեղմացնող հանգամանք են հանդիսանում, յեթե հանցանքը գործված է.—

ա) թեև անհրաժեշտ պաշտպանության սահմանից անցնելով, բայց խորհրդային իշխանության, հեղափոխական իրավակարգի կամ պաշտպանվողի կամ ուրիշի անձնավորության և իրավունքների դեմ կատարվող ոտնձգություններից պաշտպանելու համար,

բ) առաջին անգամ,

գ) չհադիտական և որևէ ստոր դրդումներից զերծ շարժառիթներով,

դ) սպառնալիքի, բռնադատության, պաշտոնեական կամ տնտեսական կախման վիճակի ազդեցության տակ,

ե) հոգեկան խիստ հուզման ազդեցության տակ,

զ) քաղցած, կարոտյալ վիճակում և կամ անձնական կամ ընտանեկան ծանր պայմանների ազդեցության տակ,

է) տգիտության, անգիտակից լինելու կամ հանգամանքների պատահական զուգադիպության հետևանքով,

ը) անչափահասի անձի կամ հղի կնոջ կողմից:

49. Յեթե մեղադրյալի գործած արարքի մեջ մի քանի հանցագործության նշաններ կան, այլ և այն դեպքում, յերբ մեղադրյալը մի քանի հանցանք է գործել, վորոնց վերաբերմամբ վճիռը դեռևս չի կայացել, դատարանը յուրաքանչյուր հանցագործության համար առանձին սոցիալական պաշտպանության համապատասխան միջոց սահմանելուց հետո, վերջնականապես վորոշում է սոցիալական պաշտպանության միջոցն ըստ այն հոդվածի, վորը նախատեսնում է գործած հանցանքներից ամենածանրը և սոցիալական պաշտպանության առավելապես ծանր միջոցը:

50. Անչափահասի նկատմամբ ազատազրկում կամ հարկադիր աշխատանքներ նշանակելիս նրանց տևողությունն անպայման պետք է պակասեցվի՝ տասն և չորսից մինչև տասնվեց տարեկան անչափահասների նկատմամբ կիսով չափ, տասնվեցից մինչև տասնութ տարեկանների նկատմամբ՝ այն ժամանակամիջոցի մեկ յերրորդականի չափով, վոր կնշանակվեր դատարանի կողմից, յեթե հանցանք գործողը լիներ չափահաս անձ. այս դեպքում դատարանի կողմից նշանակվող սոցիալական պաշտպանության միջոցի ժամանակը համենայն դեպս այս Օրենսգրքով տվյալ հանցագործության համար նախատեսված առավելագույն միջոցի կեսից ավելի չպետք է լինի:



51. Այն դեպքում, յերբ գործի հանգամանքներից դատարանը գալիս է այն կարծիքին, վոր նպատակահարմար է նշանակել օրենքի համապատասխան հոդվածով մատնանշված սոցիալական պաշտպանության նվազագույն չափից պակաս միջոց կամ կիրարկել այդ հոդվածով չնախատեսված սոցալական պաշտպանության ուրիշ ավելի պակաս ծանր միջոց, ապա այդ նվազեցումը կամ այլ հոդվածի կիրարկությունը թույլ է տրվում՝ դատավճռի մեջ համապատասխան շարժառիթները մատնանշելու պայմանով:

Այն դեպքերում, յերբ դատարանի կարծիքով մեղադրյալը գործը քննելու պահին հասարակականորեն—վտանգավոր չէ, դատարանն իրավունք ունի, դատավճռի մեջ մանրամասն շարժառիթները մատնանշելով ամենևին չկիրարկել նրա վերաբերմամբ սոցիալական պաշտպանության միջոցները:

52.— Դատապարտվածին սոցիալական պաշտպանության միջոցը կրելուց ազատելու և սոցիալական պաշտպանության օրենքով սահմանված միջոցը նվազեցնելու իրավունքը ժողովրդական դատարանների և Գերագույն դատարանի դատավճիռների վերաբերմամբ պատկանում է Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին, իսկ զինվորական տրիբունալների դատավճիռների վերաբերմամբ—ԽՍՀՄ Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին:

## ԲԱԺԻՆ 6

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ և ՊԱՅՄԱՆԱԿԱՆՈՐԵՆ—ՎԱՂԱԺԱՄ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

53. Յեթե խիստ մեկուսացմամբ կամ առանց խիստ մեկուսացման ազատությունից զրկելու կամ հարկադիր աշխատանքների դատապարտող վճիռ կայացնելիս պարզվի, վոր դատապարտյալի հանրային վտանգավորության աստիճանը չի պահանջում, վոր նա մեկուսացվի կամ հարկադիր աշխատանքներ կատարի, ապա դատարանին իրավունք է վերապահվում վորոշում կայացնելու դատավճիռը կատար չածելու մասին այն պայմանով, վոր դատապարտյալը դատարանի կողմից սահմանված ժամանակամիջոցի ընթացքում, վորը չի կարող մեկ տարուց պակաս և տաս տարուց ավելի լինել, չգործի մի նոր վոչ պակաս ծանր հանցանք:

Ծանոթություն.—Ազատությունից զրկելուն կամ հարկադիր աշխատանքներին, վորպես լրացուցիչ սոցիալական պաշտպանության միջոց միացված՝ դրամական կամ գույքային տուգանքը կիրարկվում է ընդհանուր հիմունքներով, անկախ այն հանգամանքից, վոր սոցիալական պաշտպանության հիմնական միջոցը սահմանված է պայմանաանորեն:

54. Պայմանականորեն դատապարտվածի կողմից փորձաշրջանի տևողության ընթացքում մի նոր հանցանք կատարելու դեպքում իրավունք է վերապահվում՝ պայմանականորեն հետաձգված սո-

ցիալական պաշտպանության միջոցը լրիվին կամ մասամբ միացնելու նոր գործի համար սահմանված սոցիալական պաշտպանության միջոցի հետ, կամ մեղադրյալի վերաբերմամբ կիրառելու միայն երկրորդ դատավճռով սահմանված սոցիալական պաշտպանության միջոցը: Առաջին դեպքում ազատազրկումն ընդհանուր առմամբ 10 տարուց ավելի չպիտի լինի:

55. Եթե պայմանականորեն դատապարտվածը դատարանի կողմից նշանակված փորձաշրջանի ընթացքում չի գործի նոր՝ ոչ նվազ ծանր հանցանք, դատարանի վճիռը համարվում է իր ուժը կորցրած, իր բոլոր հետևանքներով և պայմանականորեն դատապարտվածը համարվում է չդատված անձ:

56. Որոշ ժամանակով սոցիալական պաշտպանության միջոցների դատապարտված և ուղղվելու նշաններ ցույց տվող անձինք, դատարանի որոշած սոցիալական պաշտպանության միջոցի մեկ երրորդ մասը կրելուց հետո կարող են պայմանականորեն վաղաժամ ազատվել: Պայմանականորեն վաղաժամ ազատումն իրագործվում է կամ սոցիալական պաշտպանության միջոցը հետագայում կրելուց ազատելով կամ սոցիալական պաշտպանության որոշյալ միջոցն ավելի մեղմ միջոցով փոխարինելով և կիրառվում է Ուղղիչ աշխատանքի Օրենսգրքով սահմանված կարգով:

Ազատազրկումն ուղղիչ—աշխատանքային ճամբարներում կրող անձանց նկատմամբ պայմանականորեն—վաղաժամ ազատումը կիրառվում է դատապարտվածին այլ ճամբարի շրջանում բնակեցնելով՝ ազատազրկության ժամանակամիջոցի չկրած մասի տևողության ընթացքում:

Ազատազրկումն ուղղիչ—աշխատանքային ճամբարներում կրող անձանց պայմանականորեն վաղաժամ ազատումը կարգավորվում է այդ ճամբարների կանոնադրությամբ:

Եթե վաղաժամ ազատվածը մնացած ժամանակի ընթացքում մի նոր, ոչ—ծանր հանցանք չգործի՝ ապա ժամանակամիջոցի այդ մասը միացվում է դատարանի կողմից նոր հանցագործության համար որոշված սոցիալական պաշտպանության միջոցին, սակայն այնպես, որ ընդհանուր առմամբ ազատազրկության տևողությունը տաս տարուց, իսկ հարկադիր աշխատանքներինը՝ մեկ տարուց ավելի չլինի:

57. Ազատազրկման դատապարտված և անչափահասների համար հիմնած աշխատանքի տներում գտնվող անչափահասները մնում են այնտեղ մինչև ուղղվելը, սակայն ոչ ավելի, քան մինչև տասնըութ տարեկան հասակը: Եթե այդ հասակը լրանալու մոմենտին նրանք դեռևս լրիվ կրած չեն լինի դատարանի որոշած ազատազրկությունը, կարող են վաղաժամ ազատվել:

Այն անչափահասները, որոնց վաղաժամ ազատելն անհնարին կհամարվի մնում են նույն այդ աշխատանքի տներում կամ փոխադրվում են աշխատանքի այլ տներ կամ գաղութներ ՀՍԽՀ Ուղղիչ աշխատանքի Օրենսգրքով սահմանված հիմունքներով:



# ՀԱՏՈՒԿ ՄԱՍ

## ԳԼՈՒԽ 1

## ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

58. Հակահեղափոխական է համարվում ամեն մի գործողություն, որի նպատակն է տապալել, քայքայել կամ թուլացնել բանվորա—գյուղացիական խորհուրդների և ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների սահմանադրությունների հիման վրա այդ խորհուրդների կողմից ընտրված բանվորա—գյուղացիական կառավարությունների իշխանությունը՝ ինչպես ԽՍՀ Միության, այնպես և դաշնակից ու ինքնավար հանրապետությունները, կամ որի նպատակն է քայքայել կամ թուլացնել ԽՍՀ Միության արտաքին ապահովությունը և պրոլետարական հեղափոխության տնտեսական, քաղաքական և ազգային հիմնական նվաճումները:

Բոլոր աշխատավորների շահերի միջազգային համերաշխության շնորհիվ նույն այդ գործողությունները հակահեղափոխական են համարվում և այն ժամանակ, երբ նրանք ուղղված են աշխատավորների ամեն մի ուրիշ պետության դեմ, թեկուզ և այդ պետությունները ԽՍՀ Միության կազմի մեջ չլինեն:

59. Հակահեղափոխական նպատակներով զինված ապստամբություններ կազմակերպելու կամ զինված բանդաներով խորհրդային տերրիտորիա ներխուժելու նույն նպատակներով, մասնավորապես՝ ԽՍՀՄիությունից և առանձին դաշնակից հանրապետություններից նրա տերրիտորիայի մի մասը բռնի կերպով անջատելու և ԽՍՀ Միության կողմից օտար պետությունների հետ կնքած պայմանագրերը քանդելու նպատակով իշխանությունը կենտրոնում կամ տեղերում գրավելու համար կիրառվում է.—

Սոցիալական պաշտպանության միջոցի առավելագույն չափը— գնդակահարություն, կամ աշխատավորների թշնամի հայտարարելը՝ գույքի գրավմամբ և դաշնակից հանրապետության, իսկ դրա հետևանքով նաև ԽՍՀ Միության քաղաքացիությունից զրկելով և ընդմիշտ արտաքսելով ԽՍՀ Միության սահմաններից: Մեղմացնող հանգամանքների դեպքում թույլատրվում է սոցիալական պաշտպանության միջոցն իջեցնել մինչև ազատությունից զրկելը ոչ պակաս քան երեք տարի ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա որոշ մասի գրավմամբ:

60. Հակահեղափոխական նպատակներով օտար պետության կամ նրա առանձին ներկայացուցիչների հետ կապ պահպանելու, այլ և ԽՍՀ Միության հետ պատերազմական դրության մեջ գտնվող կամ նրա դեմ ինտերվենցիայի կամ պաշարման միջոցով պայքար մղող օտար պետությանը որևէ ձևով աջակցելու և օժանդակելու դեպքում կիրառվում են—

այս Օրենսգրքի 59-րդ հոդվածում մատնանշված սոցիալական պաշտպանության միջոցները:

61. Վորևէ յեղանակով միջազգային բուրժուազիայի այն մասին աջակցություն ցույց տալու համար, վոր չճանաչելով կապիտալիստական սիստեմին փոխարինելու յեկող կոմունիստական սիստեմի իրավահավասարությունը, ձգտում է տապալել այդ սիստեմը, այլ և այդ բուրժուազիայի ազդեցության տակ գտնվող կամ անմիջականորեն նրա կողմից կազմակերպված հասարակական խմբավորություններին կամ կազմակերպություններին՝ ԽՍՀ Միության դեմ իրենց թշնամական գործունեյությունն իրականացնելու գործում աջակցելու համար կիրարկվում է.—

Ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով՝ ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի զրավմամբ. բարձրացնելով առանձնապես ծանրացնող հանգամանքներում մինչև սոցիալական պաշտպանության միջոցի առավելագույն չափը— գնդակահարություն, կամ աշխատավորների թշնամի հայտարարելը, գույքի զրավմամբ և դաշնակից հանրապետության, իսկ դրա հետևանքով նաև ԽՍՀ Միության քաղաքացիությունից զրկելով և ԽՍՀ Միության սահմաններից ընդմիշտ արտաքսելով:

62. Ոտար պետությանը կամ նրա վորևէ հասարակական խմբավորություններին, նրանց ներկայացուցիչների հետ հարաբերություններ պահպանելու, կեղծ փաստաթղթեր ոգտագործելու կամ այլ յեղանակով ԽՍՀ Միությանը պատերազմ հայտարարելուն տրամադրելու, կամ ԽՍՀ Միության գործերի մեջ միջամտելու կամ այլ թշնամական գործողությունների հակելու, մասնավորապես պաշարման, ԽՍՀ Միության կամ դաշնակից հանրապետությունների պետական գույքը զրավելու, դիվանագիտական հարաբերությունները խզելու, ԽՍՀ Միության հետ կնքած պայմանագրերը քանդելու և այլ գործողությունների տրամադրելու համար կիրարկվում են—

այս Որենսգրքի 59-րդ հոդվածում մատնանշված սոցիալական պաշտպանության միջոցները:

63. Լրտեսության, այսինքն՝ իրենց բովանդակությամբ հատկապես իբրև պետական գաղտնիք պահվող տեղեկությունները ոտար պետություններին, հակահեղափոխական կազմակերպություններին կամ մասնավոր անձանց տալու կամ նրանց տալու նպատակով հափշտակելու կամ հավաքելու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը վոչ պակաս, քան յերեք տարի ժամանակով— ամբողջ գույքի կամ նրա մի մասի զրավմամբ:

Իսկ այն դեպքում, յերբ լրտեսությունն առաջ է բերել, կամ կարող էր առաջ բերել պետության շահերի համար խիստ ծանր հետևանքներ, կիրարկվում է—

սոցիալական պաշտպանության միջոցի առավելագույն չափը— գնդակահարություն,

կամ աշխատավորների թշնամի հայտարարելը՝ գույքի զրավմամբ, դաշնակից հանրապետության, իսկ դրա հետևանքով



նաև ԽՍՀ Միության քաղաքացիությունից զրկելով և ԽՍՀ Միության սահմաններից ընդմիշտ արտաքսելով:

Տնտեսական տեղեկություններ հափշտակելու կամ հավաքելու համար, վորոնք ըստ բովանդակության հատկապես պահվող պետական գաղտնիք չեն, բայց հրապարակելի չեն, որենքով կամ դերատեսչությունների, հիմնարկությունների և ձեռնարկությունների ղեկավարների կարգադրությամբ ուղղակի արգելված լինելով, և այդ տեղեկությունները վարձատրությամբ կամ ձրիաբար վերոհիշյալ կազմակերպություններին կամ անձանց տալու համար կիրարկվում է—

Ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

Ծանոթություն 1.— Հատկապես պահվող պետական գաղտնիք են համարվում այն տեղեկությունները, վորոնք թված են ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատված, դաշնակից հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների հետ համաձայնեցված և ի գիտություն հանրության հրատարակված ցուցակում:

Ծանոթություն 2.— Զինվորական ծառայողների լրտեսության վերաբերմամբ իր ուժն է պահպանում 249-րդ հոդվածը:

63 ա. Պետական պաշտպանության վերաբերյալ գյուտերի և կատարելագործությունների նայեվ գաղտնի ճանաչված այլ գյուտերի և կատարելագործությունների մասին արտասահման հայտ ներկայացնելու և հանձնելու համար կիրարկվում է—

Սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը—գնդակահարությունը, կամ աշխատավորներին թշնամի հայտարարելը, գույքի բռնագրավմամբ, հանրապետության և միաժամանակ ԽՍՀ Միության քաղաքացիությունից զրկելով և ԽՍՀ Միության սահմաններից ընդմիշտ արտաքսելով:

64. Պետ. արդյունաբերությունը, տրանսպորտը, առևտուրը, դրամական շրջանառությունը կամ վարկային սիստեմը, այլ և կոոպերացիան հակահեղափոխական նպատակներով՝ պետ. հիմնարկությունների և ձեռնարկությունների համապատասխան ոգտագործման կամ նրանց նորմալ գործունեյությանը դիմադրելու միջոցով քայքայելու, այլև պետական հիմնարկություններն ու ձեռնարկությունները նախկին սեփականատերերի կամ շահագրգռված կապիտալիստական կազմակերպությունների շահերի համար ոգտագործելու կամ նրանց գործունեյությանն ընդդիմանալու համար կիրարկվում են—

Այս Որենսգրքի 59-րդ հոդվածում մատնանշված սոցիալական պաշտպանության միջոցները:

65. Խորհրդային իշխանության ներկայացուցիչների կամ հեղափոխական բանվորական և գյուղացիական կազմակերպություն-

ների գործիչների դեմ ուղղված տեռորիստական ակտեր կազմակերպելու, այլև այդպիսի ակտեր կատարելուն մասնակցելու համար՝ նույնիսկ հակահեղափոխական կազմակերպության չպատկանող անձանց կողմից, կիրառվում են—

այս Օրենսգրքի 59—րդ հոդվածում մատնանշած սոցիալական պաշտպանության միջոցները:

66. Հակահեղափոխական նպատակներով՝ պայթեցման, հրկիզման և կամ այլ յեղանակներով յերկաթուղային կամ հաղորդակցության այլ ճանապարհներն ու միջոցները, ժողովրդական կապի միջոցները, ջրանցքները, հասարակական պահեստները և այլ կառուցվածքները կամ պետական, հասարակական գույքերը քանդելու և վնասելու համար կիրառվում են—

այս Օրենսգրքի 59—րդ հոդվածում մատնանշված սոցիալական պաշտպանության միջոցները:

66. ա. Գնացքի կամ նավի խորտակում առաջ բերելու նպատակով հաղորդակցության յերկաթուղային կամ այլ ճանապարհները, նրանց վրայի կառուցվածքները, նախազգուշական նշանները, շարժական կազմը և նավերը փչացնելու համար կիրառվում է—

ազատությունից զրկելը յերեք տարուց ոչ պակաս ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա մի մասի գրավմամբ, բարձրացնելով առանձնապես ծանրացնող հանգամանքներում մինչև սոցիալական պաշտպանության առավելագույն չափը—գնդակահարություն, գույքի գրավմամբ:

67. Պրոպագանդի կամ ագիտացիայի համար, վորով կոչ է արվում տապալելու, քայքայելու կամ թուլացնելու Խորհրդային իշխանությունը կամ հակահեղափոխական այս կամ այն առանձին հանցանք գործելու (այս Օրենսգրքի 59—66–րդ հոդվածներով), այլ և նույն բովանդակության գրականություն պատրաստելու, պահելու և տարածելու համար կիրառվում է.—

ազատությունից զրկելը ոչ պակաս, քան վեց ամիս ժամանակով:

Նույն այդ գործողությունների համար, յեթե նրանք կատարվել են մասսայական խռովությունների ժամանակ, կամ օգտագործելով մասսաների կրոնական կամ ազգային նախապաշարմունքները, կամ պատերազմական պայմաններում և կամ պատերազմական դրության մեջ հայտարարված վայրերում, կիրառվում են.—

այս Օրենսգրքի 59-րդ հոդվածում մատնանշված սոցիալական պաշտպանության միջոցները:

68. Ամեն տեսակ կազմակերպչական գործունեության համար, վորի նպատակն է այս Օրենսգրքով նախատեսված հանցագործությունների նախապատրաստելը կամ կատարելը, այլև այս գլխում նախատեսնված հանցագործություններից վորևէ մեկը նախապատրաստելու կամ կատարելու նպատակով ստեղծված կազմակերպության մասնակցելու համար կիրառվում են.—



այս գլխի համապատասխան հոդվածներում մատնանշված սոցիալական պաշտպանության միջոցները:

69. Նախապատրաստվող կամ արդեն իսկ կատարված հակահեղափոխական հանցանքի մասին հաստատապես տեղեկություն ունենալու դեպքում չհայտնելու համար կիրառվում է.—

ազատությունից զրկելը վեց ամսից ոչ պակաս ժամանակով:

70. Ցարական ռեժիմի օրոք կամ հակահեղափոխական կառավարությունների մոտ քաղաքացիական պատերազմի շրջանում վարած պատասխանատու կամ գաղտնի (գործակալական) պաշտոններում բանվոր դասակարգի և հեղափոխական շարժման դեմ կատարած ակտիվ գործողությունների կամ մղած ակտիվ պայքարի համար կիրառվում են—

այս Օրենսգրքի 59–րդ հոդվածում մատնանշված սոցիալական պաշտպանության միջոցները:

71. Հակահեղափոխական սաբոտաժի, այսինքն՝ վորևէ մեկի կողմից իր վորոշ պարտականությունները գիտակցորեն չկատարելու, կամ դիտավորյալ կերպով անփույթ կատարելու համար, յեթե այդ արվում է կառավարության իշխանությունը և պետական ապարատի գործունեությունը թուլացնելու հատուկ նպատակով, կիրառվում են—

ազատությունից զրկելը մեկ տարուց ոչ պակաս ժամանակով՝ ամբողջ գույքի կամ նրա վորոշ մասի գրավմամբ բարձրացնելով առանձնապես ծանրացնող հանգամանքներում մինչև սոցիալական պաշտպանության միջոցների առավելագույն չափը—գնդակահարությունը՝ գույքի գրավմամբ:

71. ա. Հրազենի, նրա մասերի և հրանյութերի գաղտնի կամ բացահայտ հափշտակության համար, վորը կատարվում է՝

ա. Բանվորա—Գյուղացիական Կարմիր բանակի պահեստներից, հաղորդակցության ճանապարհների Ժողովրդական Կոմիսարիատի հաղորդակցության ճանապարհների պահպանությունից և պետական հատուկ նշանակություն ունեցող ձեռնարկություններից ու կառուցվածքների ռազմականացված պահպանությունից:

բ. Զինվորական մասերի մշտական կամ ժամանակավոր տեղավորման վայրերից, հաղորդակցության ճանապարհների Ժողովրդական Կոմիսարիատի հաղորդակցական ճանապարհների ռազմականացված պահպանության մասերից, յեթե հրազենը, նրա մասերը և հրանյութերը գտնվել են պահպանության կամ հատուկ հսկողության տակ, կիրառվում է—

ազատությունից զրկելը մեկ տարուց ոչ պակաս ժամանակով, իսկ այն դեպքում, յերբ հափշտակությունը զուգորդված է յեղել համապատասխան պահպանության կամ հսկողության պարտականությունները կատարող անձանց կյանքի և առողջության համար վտանգավոր բռնության հետ.—

ազատությունից զրկելը յերեք տարուց ոչ պակաս ժամանա-

կով, բարձրացնելով առանձնապես ծանրացնող հանգամանքներում մինչև սոցիալական պաշտպանության առավելագույն չափը— գնդակահարություն՝ գույքի գրավմամբ:

## ԳԼՈՒԽ 2

# ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

### 1. ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՌԱՆՁՆԱՊԵՍ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ.

72. *ԽՍՀ Միության համար վարչակարգի դեմ ուղղված առանձնապես վտանգավոր են համարվում այն հանցագործությունները, վորոնք կատարված լինելով առանց հակահեղափոխական նպատակների, խախտում են ԽՍՀ Միության և դաշնակից հանրապետությունների պետական վարչության և տնտեսական հզորության հիմքերը:*

73. *Զարդերի, յերկաթուղային ճանապարհների և հաղորդակցության ու կապի այլ միջոցների ավերումի, սպանությունների, հրկիզումների և այլ նման գործողությունների հետ զուգորդված մասսայական անկարգությունների համար կիրարկվում են.—*

*ա. մասսայական անկարգություններ կազմակերպողների և ղեկավարողների, այլև վերոհիշյալ հանցագործությունների բոլոր մասնակցողների կամ իշխանությանը զինված դիմադրություն ցույց տվողների վերաբերմամբ՝ ազատությունից զրկելը յերկու տարուց վոչ պակաս ժամանակով՝ ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի գրավմամբ, բարձրացնելով հանցանքն առանձնապես ծանրացնող հանգամանքներում մինչև սոցիալական պաշտպանության առավելագույն միջոց— գնդակահարությունը՝ գույքի գրավմամբ:*

*բ. Այլ մասնակցողների վերաբերմամբ՝*

*վերոհիշյալ հանցագործություններով չծանրացված, սակայն օրինական պահանջներին բացահայտ կերպով չենթարկվելու կամ իշխանության վրա դրված պարտականությունները կատարելուն դիմադրելու, կամ նրան ակնհայտնի ապօրինի պահանջներ կատարելուն հարկադրելու հետ կապված մասսայական անկարգությունների համար կիրարկվում է—*

*ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ ավելի ժամանակով:*

74. *Բանդիտիզմի, այսինքն՝ զինված բանդաներ կազմակերպելու և նրանց ու նրանց կողմից խորհրդային ու մասնավոր հիմնարկությունների կամ առանձին քաղաքացիների վրա կազմակերպված հարձակումներին մասնակցելու, գնացքներ կանգնեցնելու և յերկաթուղային ճանապարհները և հաղորդակցության ու կապի այլ միջոցները քանդելու համար կիրարկվում է.—*

*ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով՝ ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի գրավմամբ, բարձրացնելով հանցանքն առանձնապես ծանրացնող հանգամանքներում մինչև սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը—գնդակահարությունը՝ գույքի գրավմամբ:*



75. *Իսկական զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելու դեպքում կիրարկվում են—*

*հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:*

*Նույն գործողությունների համար հանցանքը ծանրացնող հանգամանքներում, մասնավորապես յեթե մեկը խուսափում է իրեն մարմնական վնասվածք պատճառելով, հիվանդ ձևանալով, փաստաթղթի կեղծիք կատարելով, պաշտոնական անձանց կաշառելով և այլն, կամ կրոնական համոզմունքների պատրվակով, կիրարկվում է—*

*ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:*

76. *Յեթե պարտադիր զինվորական ծառայությունից կրոնական համոզմունքներով ազատված անձինք կամ թիկունքային աշխարհազորում հաշվի առնված անձինք խուսափում են թիկունքն ու ճակատը սպասարկող զորախմբերում ծառայելու զորակոչից, կիրարկվում է—*

*ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով:*

77. *Պատերազմական ժամանակի պայմաններում հարկեր մուծելուց կամ պարհակներ կատարելուց (մասնավորապես զինվորաավտո— փոխադրական, ձիազինվորական, զինվորա— սայլակային և զինվորա—նավային պարհակներ կատարելուց) հրաժարվելու կամ խուսափելու համար կիրարկվում է—*

*ազատությունից զրկելը վեց ամսից վոչ պակաս ժամանակով, բարձրացնելով հանցանքն առանձնապես ծանրացնող հանգամանքներում մինչև սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը—գնդակահարությունը՝ գույքի գրավմամբ:*

78. *Ազգային կամ կրոնական թշնամություն կամ պառակտում առաջ բերելու նպատակով պրոպագանդ և կամ ագիտացիա մղելու համար, այլ և նույն բնույթի գրականություն տարածելու կամ պատրաստելու և պահելու դեպքում կիրարկվում է—*

*ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով:*

*Նույն այդ գործողությունների համար, յեթե տեղի յեն ունեցել պատերազմական կամ մասսայական խռովությունների ժամանակ, կիրարկվում է—*

*ազատությունից զրկելը յերկու տարուց վոչ պակաս ժամանակով ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի գրավմամբ, հանցանքըն առանձնապես ծանրացնող հանգամանքներում բարձրացնելով մինչև սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը—գնդակահարություն՝ գույքի գրավմամբ:*

79. *Մետաղե դրամ, պետական գանձարանի տոմսեր, պետական բանկի բանկատոմսեր և պետական արժեթղթեր կեղծելու և վաճառելու համար, այլ և ոտարյերկրյա վալյուտա կեղծելու և կեղ-*

ծածը վաճառելու համար, յերբ այդ կատարվում է վորպես արհեստ, կիրառվում է—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը—
գնդակահարություն՝ գույքի գրավմամբ, հանցանքը մեղմացնող հանգամանքներում իջեցնելով մինչև ազատությունից
զրկելը յերկու տարուց վոչ պակաս ժամանակով՝ ամբողջ գույքի
կամ նրա մեկ մասի գրավմամբ:

Նամականիշներ, յերկաթուղային և ջրային փոխադրության
տոմսեր և այլ ճամբորդական և ապրանքների փոխադրության փաստաթղթեր կեղծելու և կեղծածը վաճառելու համար, յերբ այդ կատարվում է, վորպես արհեստ, կիրառվում է—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

80. Այս Օրենսգրքի 73,74 և 79 հոդվածներով նախատեսված հանցագործությունների նախապատրաստման մասին ստույգ կերպով իմանալու և չհայտնելու կամ կատարվածի մասին չհայտնելու և թաքցնելու համար կիրառվում է—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով:

81. Վորակյալ մաքսանենգության համար (ԽՍՀՄ Մաքսային Օրենսգրքի 165 հոդ. Օր. և Կարգ. ժող. 1928 թ. №—1, հոդ. 1 և2), բացի Մաքսային վարչության կողմից ապրանքները գրավելուց և տուգանելուց, կիրառվում է—

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա մի մասի գրավմամբ, հանկով և ծանրացնող հանգամանքներում բարձրագույն առանձնապես սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը—գնդակահարություն, գույքի գրավմամբ:

82. Պետական սահմաններից ապօրինաբար անցնելուն ուժադրելու համար, յերբ այդ կատարվում է, վորպես արհեստ, կամ պաշտոնատար անձի կողմից, կիրառվում է—

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով:

83. Արտաքին առևտրի մենաշնորհի կանոնները խախտելու համար կիրառվում է—

ազատությունից զրկելը, մինչեվ տաս տարի ժամանակով՝
ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի գրավմամբ:

83—ա. Պետական մենաշնորհների վերաբերյալ կանոնները խախտելու համար, բացի 83 հոդվածով նախատեսված մենաշնորհից, կիրառվում է—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա մի մասի գրավմամբ, կամ տուգանք
մինչև 3000 ռուբլի:

84. Վալյուտային գործառնությունների կանոնները խախտելու համար կիրառվում է—

ազատությունից զրկելը մինչեվ յերեք տարի ժամանակով և
ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի գրավմամբ:



84—ա. Կրոդի անունով դրամական պարտավորություններ, նաև ամեն տեսակի անվանական ու վոչ անվանական փաստաթղթեր ու նշաններ (բոնաներ, մարկաներ, ապրանքային օրդերներ, հաշվարկման անդորրագրեր և այլն) շրջանառության մեջ, վորպես վճարման միջոց (դրամական սուրրոգատ) առանց ԽՍՀՄ ֆինժողկոմատի թույլտվության բաց թողնելու համար կիրառվում է—

ազատությունից զրկելը մինչեվ յերեք տարի ժամանակով:

Ծանոթություն 1.— Չեկերն ու ժիրո—հրամանները (վարկային հիմնարկներում դրամական գումարները մի հաշվից մի այլ հաշվի փոխանցելու մասին կարգադրությունները) յենթակա չեն այս հոդվածի ներգործությանը:

84—բ. Արժեթղթեր (բաժնետոմսեր, ժամանակավոր վկայականներ, փոխառության պարտատոմսեր և այլն) ավանդագրեր, չեկի գրքույկներ և դրամական սուրրոգատներ պատրաստելու համար, յեթե այդ կատարվում է վոչ պետական դրամական նշաններ բաց թողնող վարչության միջոցով, կիրառվում է—

84—ա հոդվածով նախատեսված սոցիալական պաշտպանության միջոցը:

Ծանոթություն 2.—Այս հոդվածի ներգործությունը չի տարածվում այն դեպքերի վրա, յերբ ավանդագրեր, չեկի գրքույկներ և դրամական սուրրոգատներ պատրաստելը տեղի յե ունեցել ամեն անգամ ԽՍՀՄ ֆինժողկոմատի թույլտվությամբ, վորպես ընդհանուր կանոնից բացառություն, նաև ժիրո—հրամանների բլանկներ պատրաստելու դեպքերի վրա:

84—գ. ԽՍՀ Միության սահմաններում կատարված գյուտերի նաև արտասահմանում գործուղղված խորհրդային քաղաքացիների կատարած գյուտերի վերաբերյալ առանց պատշաճ թույլտվության արտասահման հայտեր ներկայացնելու համար կիրառվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով,
կամ տուգանք մինչեվ հազար ռուբլի:

Իսկ այս հոդվածում նշված գյուտերն առանց պատշաճ թույլտվության արտասահման հանձնելու համար կիրառվում է—

ազատությունից զրկելը, մինչեվ տասը տարի ժամանակով,
ամբողջ գույքի կամ նրա մի մասի գրավմամբ:

84—դ. Ծաղկի ապարատների ոգտագործման վերաբերյալ սահմանված կանոնները՝ ԽՍՀ Միության նավերի, նաև ԽՍՀ Միության պատկանող ծովերում գտնվող ոտարյերկրյա նավերի վրա խախտելու համար կիրառվում է—

ազատությունից զրկելը մինչեվ յերկու տարի ժամանակով
կամ տուգանք մինչեվ տաս հազար ռուբլի:

## II. ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ԱՅԼ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

85. Վարչակարգի դեմ ուղղված հանցանք է համարվում ամեն մի արարք, վոր անմիջականորեն ուղղված չլինելով Խորհրդային

Իշխանության և Բանվորա—գյուղացիական կառավարության դոյության դեմ, այնուամենայնիվ խանգարում է վարչական կամ ժողովրդական տնտեսության մարմինների կանոնավոր գործունեությանը և զուգորդվում է իշխանության մարմիններին ընդդիմանալու, նրանց գործունեությանը խոչընդոտ հանդիսանալու, [illegible]ներին չհնազանդվելու և իշխանության ուժն ու հեղինակությունը թուլացնող այլ գործողությունների հետ:

86· Առանձին քաղաքացիների կողմից հարկերը կամ պարտադիր կոոպերատիվ ապահովագրության տուրքերը, հակառակ յեղած հնարավորության, սահմանված ժամանակին չվճարելու համար, յեթե այդ կատարված է առաջին անգամ կիրարկվում են.—

տուգանք մինչև 100 ռուբլի, կամ հարկադիր աշխատանքներ մինչև յերեք ամիս ժամանակով:

Հարկերը և պարտադիր կոոպերատիվ ապահովագրության տուրքերը կրկնաբար չվճարելու համար կիրարկվում է—

տուգանք մինչև չվճարված հարկի կամ տուրքի տասնապատիկ չափը կամ ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով:

Հարկերը չարամտորեն չվճարելու համար այն դեպքում, յերբ գույքը թաքցվում է ուրիշի անվան փոխանցելու կամ կեղծ պարտավորություններ տալու միջոցով, թեկուզ առաջին անգամ, կիրարկվում է—

տուգանք մինչև չվճարած հարկի տասնապատիկ չափը կամ ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով:

Յեթե նույն գործողությունները կատարում են կուլակային տարրերը, թեկուզ առաջին անգամը, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով ամբողջ գույքի կամ նրա մի մասի զրավմամբ:

Ծանոթություն .— Հարկերի և տուրքերի կրկնակի չվճարում է համարվում հարկային ընթացիկ շրջանում թեկուզ առաջին անգամ հարկերի վճարումն ուշացնելը, յեթե չվճարողը հարկերի վճարումն ուշացրել է նաև նախորդ հարկային շրջանում ինչպես նաև ընթացիկ հարկային շրջանում վճարման յերկու ժամկետ անցկացնելը:

86-ա· Հատուկ զինվորական հարկը՝ հնարավորություն յեղած դեպքում չը վճարելու համար կիրարկվում է—

հարկադիր աշխատանք մինչև յերկու ամիս ժամանակով կամ տուգանք չվճարված հարկի յեռապատիկ գումարից վոչ ավելի:

Նույն գործողության համար, յեթե կատարված է նույն հարկը չվճարելու համար ընթացիկ կամ նախորդ հարկային տարում դատապարտված անձի կողմից կիրարկվում են—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք չվճարած հարկի հնգապատիկ գումարից վոչ ավելի:



Նույն գործողությունների համար, յեթե կատարված է թեկուզ առաջին անգամ սակայն մի խումբ անձանց կողմից՝ նախապես համաձայնության գալով կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչեվ յերկու տարի ժամանակով,

87· Հանրապետական նշանակություն ունեցող պարհակներ, առաջադրություններ և աշխատանքներ կատարելուց հրաժարվելու համար կիրարկվում է—

առաջին անգամ՝ տուգանք, վորը նշանակվում է իշխանության համապատասխան մարմինների կողմից տրված առաջադրության, պարհակի և աշխատանքների արժեքի հնգապատիկի չափով.

Յերկրորդ անգամ՝ ազատազրկում կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:

Յեթե նույն գործողությունները կատարում են կուլակային տարրերը, թեկուզ առաջին անգամ, կամ այլ անձինք՝ ծանրացուցիչ հանգամանքներում՝ այն է մի խումբ անձանց միաբանությամբ, կամ թե պարհակ, առաջադրություններ և աշխատանքներ իրականացնելիս իշխանության մարմիններին ակտիվ դիմադրություն, նաև տոցխալխառնային չենարարության այլ ձևի դիմադրություն ցույց տալով, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչեվ յերկու տարի ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի զրավմամբ և տվյալ վայրից վտարելով կամ առանց վտարելու:

87-ա· Յեթե պարտադիր զինվորական ծառայությունից կրոնական համոզմունքներով ազատված և թիկունքային աշխարհազորում հաշվի առնված անձինք, վորևե կերպ հրաժարվում կամ խուսափում են նրանց վրա դրված հանրօգուտ աշխատանքներ կատարելուց, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը վեց ամսից վոչ պակաս ժամանակով:

Նույն գործողությունների համար, յերբ այն կատարվում է մի խումբ անձանց կողմից կամ թե զուգորդվում է իշխանության կամ Խորհրդային հասարակայնության ներկայացուցիչների վերաբերմամբ բռնությամբ, կիրարկվում է—

ազատությունից զրկելը վոչ պակաս, քան յերկու տարի ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա մի մասի զրավմամբ:

88· Հարկման կամ հաշվառման յենթակա առարկաների քանակության մասին սխալ ցուցմունք տալու կամ փոխադարձ համաձայնությամբ կազմակերպված յեղանակով թաքցնելու համար կիրարկվում է—

դեկավարների և կազմակերպողների նկատմամբ՝

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով՝ գույքի մեկ մասի զրավմամբ կամ առանց դրան:

Մնացած մասնակիցների նկատմամբ, այլ և այն դեպքում, յերբ հիշյալ գործողությունները կատարված են մեկ անձի կողմից՝ առանց վորևե մեկի հետ նախապես համաձայնության գալու—

տուգանք հարկման յենթակա՝ թաքցրած առարկայի վրա ընկնող հարկի տասնապատիկ չափից վոչ ավելի:

88—ա· Ձեռնարկության խսկական շրջանառությունն ու յեկամուտները կրկնակի առեվտրական մատյաններ պահելու կամ նրանց մեջ գիտավորյալ կերպով սխալ տեղեկություններ մտցնելու միջոցով հարկային մարմիններից թաքցնելու համար կիրառվում է—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով, գույքի գրավմամբ կամ առանց դրան:

89· Ժառանգության և նվիրման օրենքից, ինչպես նաև նվիրման ակտերով փոխանցվող ժառանգություններից և գույքերից գանձվող հարկերից խուսափելու նպատակով ժառանգական գույքը կամ նվիրման ակտերով փոխանցվող գույքն ամբողջովին կամ մասամբ թաքցնելու, ինչպես նաև հիշյալ գույքերի արժեքն արհեստական կերպով նվազեցնելու համար կիրառվում է—

թաքցնող անձին ժառանգության կամ նվիրման ակտով փոխանցվող ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի գրավմամբ:

96· Զինապարտների հաշվառման համար սահմանված կանոնները խախտելու համար կիրառվում են—

հարկադիր աշխատանքներ մինչեվ մեկ ամիս ժամանակով կամ տուգանք մինչեվ յերկու հարյուր ռուբլի:

91· Նախազորակոչյան պարապմունքներից և ստուգողական հավաքներից խուսափելու համար կիրառվում են —

հարկադիր աշխատանքներ մինչեվ յերկու ամիս ժամանակով, կամ տուգանք՝ մինչեվ յերկու հարյուր ռուբլի:

Պահեստի մեջին և ավագ հրամանատարական կազմի՝ վարժական հավաքներից խուսափելու համար, կամ վորպես հրահանգչական կազմ՝ զինվորական ծառայողների և նախակոչիկների արտազորային պարապմունքներին մասնակցելուց խուսափելու համար, այլ և այն դեպքում, յերբ Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի բարձրագույն հրամանատարական կազմը խուսափում է զորաշարժական հավաքներից, դաշտային յերթերից, զորախաղերից և զորաշարժերից, կիրառվում են—

հարկադիր աշխատանքներ մինչև յերկու ամիս ժամանակով կամ տուգանք՝ մինչև յերեք հարյուր ռուբլի:

92· Փորձնական և ստուգողական զորակոչներից խուսափելու համար կիրառվում է—

հարկադիր աշխատանք մինչև յերկու ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

93· Նախակոչիկների կամ Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում չգտնվող Կարմիր Բանակի պահեստի զինվորական ծառայողների և զինապարտների կողմից պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվելու կամ խուսափելու համար կիրառվում է—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչեվ վեց ամիս ժամանակով կամ տուգանք՝ մինչեվ հինգ հարյուր ռուբլի:



Մինչ զորակոչայինների կամ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում չգտնվող զինվորական ծառայողների կամ զինապարտների՝ պարտադիր զինվորական ծառայությունից հրաժարվելու կամ խուսափելու համար, յեթե այդ կատարվել է առողջությունը վնասելու, հիվանդ ձեվանալու, փաստաթղթեր կեղծելու, պաշտոնատար անձանց կաշառելու կամ այլ խաբեբայական արարքների միջոցով, այլ և կրոնական կամ անձնական այլ համոզմունքների պատրվակով, կիրառվում է —

ազատությունից զրկելը մինչեվ յերեք տարի ժամանակով:

94· Ուսուցման, ինչպես նաև վարժական և կարճատեվ հավաքների ժամանակ բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի մասերի համալրման համար անհրաժեշտ ձիերը, սայլերը և լծասարքերը մատակարարելուց խուսափելու համար կիրառվում է—

տուգանք՝ մինչեվ յերկու հարյուր ռուբլի, չներկայացրած անասունների և առարկաների գրավմամբ կամ առանց դրան:

Ռազմական հաշվառման յենթակա լծկան կամ գրաստ անասունների (ձի, յեզ, ուղտ և այլն), սայլերի, սարքերի, ավտոմոբիլների, մոտոցիկլետների, հեծանիվների և այլ փոխադրական միջոցների, այլ և այդ մեքենաների պատկանելիք և պահեստի մասերի ռազմական հաշվառման կանոնները խախտելու, կամ դրանք առանց հարգելի պատճառի փորձնական ստուգողական հավաքների ժամանակ վերահաշվառման և ցուցակագրության չներկայացնելու համար կիրառվում է—

տուգանք՝ մինչեվ հինգ հարյուր ռուբլի:

Յեթե ուսուցման ժամանակ առանց հարգելի պատճառների զինվորականները իրենց ձիերի հետ չեն ներկայանում, կիրառվում են —

հարկադիր աշխատանքներ մինչեվ յերեք ամիս ժամանակով, կամ տուգանք մինչեվ 300 ռուբլի:

95· Միլիցիայի շարքային կազմին, քրեական հետախուզության ակտիվ կազմին կամ ազատազրկության վայրերի վարչական-շարքային կազմին պատկանող անձանց կողմից՝ մինչեվ պայմանաժամի լրանալը՝ իրենց ծառայությունն ինքնագլուխ կերպով թողնելու համար, կիրառվում է—

ազատությունից զրկելը վեց ամիս ժամանակով:

Յեթե նույն գործողությունները տեղի յեն ունեցել պատերազմական պայմաններում, կամ կատարվել են շարքային հրամանատարական կազմին պատկանող անձանց կողմից, կիրառվում է—

ազատությունից զրկելը վեց ամսից վոչ պակաս ժամանակով:

96· Պետական և հասարակական հիմնարկություններից տրվող վորեվե իրավունքներ վերապահող կամ պարհակներից ազատող վկայականներ կամ այլ փաստաթղթեր կեղծելու համար՝ ինչպես կեղծողների, այնպես էլ այլ անձանց կողմից օգտագործելու նպատակով, կիրառվում է —

ազատությունից զրկելը մինչեվ յերեք տարի ժամանակով կամ

հարկադիր աշխատանքներ՝ մինչև մեկ տարի ժամանակով։

Ակնհայտնի կեղծ փաստաթղթեր օգտագործելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ՝ մինչև վեց ամիս ժամանակով, կամ տուգանք՝ մինչև հարյուր ռուբլի։

97. Առանձին քաղաքացիների կողմից իշխանության ներկայացուցիչներին դիմադրություն ցույց տալու համար, յերբ նրանք կատարում են իրենց օրինական պարտականությունները, կամ նրանց բացահայտ ապօրինի գործողություններ կատարելուն բռնադատելու համար, վոր զուգորդված է իշխանության ներկայացուցչի անձի վրա բռնություն գործ դնելու հետ, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով։

Իշխանությանը դիմադրություն ցույց տալու համար՝ առանց բռնություն գործադրելու՝

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ՝ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի։

98. Սրիկայության, այսինքն՝ հասարակության նկատմամբ ցույց տրվող ակներև արհամարհանքի հետ զուգորդված անպատկառ արարքների համար, յեթե կատարված են առաջին անգամ, կիրարկվում է. —

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ՝ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք՝ մինչև հինգ հարյուր ռուբլի։

Յեթե հիշյալ գործողություններն արտահայտվել են վայրագության կամ աղմկարարության ձևով, կամ կրկնվել են կամ համառորեն չեն դադարել, չնայած հասարակական կարգը պահպանող մարմինների կողմից արած նախազգուշացման, և կամ աչքի յեն ընկել իրենց բացառիկ անպատկառությամբ և հանդգնությամբ, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով։

99. Իր պոստում կանգնած զինվորական պահակի կամ հասարակական կարգը պահպանող այլ իշխանությունների օրինական կարգադրությունները կամ պահանջը չկատարելու համար կիրարկվում են —

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ՝ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի։

100. Պետական մարմինների կարգադրությունները, պահանջները, կամ վորոշումները չկատարելու համար, յերբ այս Օրենսգրքով կամ հատուկ վորոշումներով քրեական պատասխանատվության այլ միջոց չի սահմանված, կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ՝ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հարյուր ռուբլի։



101. Իշխանության ներկայացուցիչներին իրենց պաշտոնական պարտականությունները կատարելու ժամանակ հրապարակով վիրավորանք հասցնելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ՝ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի։

102. Ինքնագլուխ կերպով պաշտոնական անձի կոչում կամ իշխանություն յուրացնելու համար, վոր զուգորդված է խորհրդային իշխանությանը վարկաբեկելու կամ այդ հիման վրա հանրության համար վտանգավոր վորևէ գործողություններ կատարելու հետ, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը՝ մինչև յերկու տարի ժամանակով։

103. Պետական հիմնարկություններից՝ գործերի բնական ընթացքի կամ ընդհանրապես հիմնարկության գործունեության դեմ խոչընդոտներ ստեղծելու նպատակով պաշտոնական կամ մասնավոր փաստաթղթեր հափշտակելու, վնասելու, թաքցնելու կամ վոչնչացնելու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով։

Իսկ յեթե նույն գործողությունները կատարվել են հատկապես գաղտնի և կամ առանձնապես կարևոր պետական փաստաթղթերի վերաբերմամբ.—

ազատությունից զրկելը՝ մինչև յերեք տարի ժամանակով։

104. Պետական հիմնարկությունների կամ ձեռնարկությունների ինչպես նաև հասարակական (կոոպերատիվ, արհեստակցական և այլն) կազմակերպություններին պատկանող գույքը, վորոնց թվում նաև էլեկտրալարերը, կապի միջոցները և այլն դիտավորյալ կերպով վոչնչացնելու կամ վնասելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով։

Նույն գործողությունների համար, յեթե ապացուցված է, վոր առաջին անգամ չեն կատարվում, կամ յեթե նրանց հետևանքով արտադրության դադարում կամ ընդհատում է առաջացել, և կամ խոշոր վնաս է հասցվել պետությանը, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով, գույքի զրավմամբ կամ առանց դրան։

104-ա. Գյուղատնտեսության կոլեկտիվացումը խանգարելու և նրա վերելքի դեմ արգելքներ հարուցելու նպատակով, կուլակների ու մասնավոր գնորդների կողմից՝ ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1930 թ. նոյեմբերի 1-ի վորոշման մեջ (ԽՍՀՄ Օր. և Կարգ. Ժող. 1930 թ. Նո—57, հոդ. 598) նախատեսված անասուններն անխնա մորթելու կամ դիտավորյալ կերպով նրանց խեղդելու, նաև նույնն ուրիշներին դրդելու դեպքում կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով, տվյալ վայրից աքսորելով կամ առանց դրան:

104. բ. Բամբակի, ծխախոտի և տեխնիկական այլ մշակույթների ցանքերը, ներառյալ բամբակի սեփական ցանքերը, դիտավորյալ կերպով փչացնելու և այդ ցանքերում անասուններ արածացնելու համար, յեթե պատճառած վնասը 15 ռուբլուց ավելի յե, կիրարկվում են. —

Հարկադիր աշխատանքներ մինչև 6 ամիս ժամանակով: Իսկ կուլակային—ունևոր տարրերի նկատմամբ—ազատազրկումն՝ մինչև 2 տարի ժամանակով, վտարելով տվյալ վայրից, կամ առանց վտարելու:

104. գ. Խորհրդային տնտեսություններին, մեքենա—տրակտորային կայաններին և կոլլեկտիվ տնտեսություններին պատկանող տրակտորներն ու գյուղատնտեսական մեքենաները կոտրելու կամ փչացնելու համար, յեթե այդ տեղի յե ունեցել հանցավոր և անփույթ վերաբերմունքի հետևանքով կիրարկվում են.—

Հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով:

Յեթե նույն գործողությունները կատարվում են կրկնակի կամ պատճառում են խոշոր վնաս, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

Ծանոթություն.—Յեթե տրակտորներն ու գյուղատնտեսական մեքենաները կոտրվել կամ վնասվել են աննշան չափով, ապա դատական պատասխանատվության յենթարկելու փոխարեն կարող են կիրառվել ներքին կանոնադրությամբ նախատեսված միջոցներ և օրենքով սահմանված կարգով դրամական գանձում:

104. դ) Ձիեր մորթելու, նաև չարամտորեն ձիերին խեղելու և նրանց նկատմամբ չարամիտ գործողություններ կատարելու համար, վորոնց հետևանքով ձին սատկում է կամ անպետքանում, յեթե այդ գործողությունները կատարում են կամ դրդում են ուրիշներին կատարել կուլակներն ու մասնավոր միջնորդները, ապա բացի տուգանքից և վարչական կարգով անասունները բռնագրավելուց (ԽՍՀՄ Օր. և Կարգ. Ժող. 1931 թ. Նո—71, Հոդ. 474), նրանց վերաբերմամբ կիրարկվում է.—

ազատազրկումն՝ մինչև յերկու տարի ժամանակով, տվյալ վայրից վտարելով կամ առանց վտարելու:

104. ե. Հանրայնացված հատվածում (կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ձիամեքենային կայաններում, հիմնարկներում և ձեռնարկություններում) ձիերն ապօրինաբար (առանց անասնաբուժական հսկողության թույլատվության) մորթելու նաև դիտավորյալ կերպով խեղելու և նրանց նկատմամբ չարամիտ այլ գործողություններ կատարելու համար, վորոնց հետևանքով ձին սատկում է կամ անպետքանում, կիրարկվում է.—

ազատազրկումն՝ մինչև մեկ տարի ժամանակով:



104. զ. Կոլտնտեսություններում, խորհտնտեսություններում, ձիա—մեքենային կայաններում, հիմնարկներում և ձեռնարկություններում ձիերի և առանձնապես մատակ ձիերի նկատմամբ (վորոնց շահագործումը կարող է թույլատրվել անասնաբուժական անձնակազմի կողմից և նրանց սահմանած նորմաներով) հանցավոր անփութությամբ վերաբերվելու համար, յեթե դրա հետևանքով ձին սատկում է կամ անպետքանում, կիրարկվում են—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև վեց ամիս ժամանակով:

Յեթե այդ գործողությունները ձիերի նկատմամբ սիստեմատիկ բնույթ են կրում կամ դրա հետևանքով բավականին թվով ձիեր են վոչնչանում, կիրարկվում է.—

ազատազրկումն՝ մինչև յերեք տարի ժամանակով:

105. Հող գնելու կամ վաճառելու կամ նախավաճառելու, կտակելու կամ նվիրելու այլ և գրավ դնելու համար կիրարկվում են. —

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հազար ռուբլի:

106. Ձերբակալվածին կալանքից կամ կալանավայրից ապօրինաբար ազատելու կամ նրա փախուստին աջակցելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով:

Նույն գործողությունների համար, վորոնք զուգորդվում են պահակի վերաբերմամբ գործադրած բռնության հետ, յեթե նրանք զուգորդվել չեն կյանքի համար վտանգավոր ծանր վնասվածքներ հասցնելու հետ, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

107. Կալանավորի՝ կալանքից կամ կալանավայրից ական փորելով, կողպեք կոտրելով, կամ պատերը, փականները վնասելով փախչելու, այլև բնակվելու համար արգելված վայրերը վերադառնալու կամ պարտադիր բնակության վայրից կամ աքսորավայրի ճանապարհից փախչելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը՝ մինչև մեկ տարի ժամանակով:

Դատական կամ վարչական մարմնի վորոշմամբ բնակվելու համար նշանակված վայրից ժամանակավորապես և ինքնագլուխ հեռանալու, այլև նույն մարմինների կողմից նշանակված բնակության վայրը ժամանակին չներկայանալու համար կիրարկվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև մեկ ամիս ժամանակով կամ վարչական կարգով դրվող տուգանք մինչև հարյուր ռուբլի:

108. Պարզ մաքսանենգության համար, այսինքն՝ սովետական սահմանից առանց մաքսային հիմնարկությունների կամ այդ հիմնարկությունների միջոցով, բայց մաքսային վերահսկողությունից թաքցնելով ապրանքներ, արժեքներ, դույք և ամեն տեսակ առարկաներ անցկացնելու համար, կիրարկվում է.—

վարչական կարգով դրվող տուգանք՝ մինչև մեկ հազար ռուբլի:

Կրկնակի մաքսանենգության դեպքում կիրառվում է.—

բացի տուգանքից նաև վտարում վարչական կարգով՝ սահմանագծից հիսուն կիլոմետր հեռու:

109. Առանց սահմանված անցագրի կամ առանց պատշաճ իշխանության թույլտվության արտասահման մեկնելու կամ ԽՍՀ Միության սահմանները մտնելու համար կիրառվում են.—

հարկադիր աշխատանքներ՝ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

Ծանոթություն.—Այս հոդվածի ներգործությունը չի տարածվում առանց սահմանված անցագրի կամ առանց պատշաճ իշխանությունների թույլտվության ԽՍՀ Միություն գալու այն դեպքերի վրա, յերբ համաձայն ՀՍԽՀ Սահմանադրության 7-րդ հոդ. «բ» կետի՝ իրենց քաղաքական գործունեության կամ կրոնական համոզմունքների համար հալածվող օտարերկրացիներն օգտվում են ապաստան ստանալու իրավունքից:

110. Անտառները հափշտակելուց և ոչնչացնելուց պաշտպանելու նպատակով հրատարակված որոշումները խախտելու համար, յեթե ապօրինաբար ձեռք բերածի արժեքը կամ անտառային տնտեսության հասցրած վնասի չափը յերեսուն ռուբլուց ավելի չի ըստ այն սակագնի, որ ամեն տարվա համար սահմանում է ՀՍԽՀ Տնտեսական Խորհրդակցությունը, կիրառվում է.—

տուգանք՝ ապօրինաբար ձեռք բերածի արժեքի կամ հասցրած վնասի յեռապատիկից ոչ ավելի չափով ըստ նույն սակագների, սակայն մեկ ռուբլուց ոչ պակաս՝ ապօրինաբար ձեռք բերածի գրավմամբ կամ առանց դրան:

Անտառները հափշտակելուց պաշտպանելու նպատակով հրատարակված որոշումները խախտելու համար, յեթե ապօրինաբար ձեռք բերածի արժեքը կամ հասցրած վնասի չափը յերեսուն ռուբլուց ավելի յե՝ ըստ նույն սակագների, կամ յեթե հափշտակությունը կրկնակի յե, կիրառվում են—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք ապօրինաբար ձեռք բերածի արժեքի յեռապատիկից ոչ ավելի չափով՝ ապօրինաբար ձեռք բերածն անպայման գրավելով:

111. Համայնական նշանակություն ունեցող ծովերում, գետերում և լճերում ձկնորսությամբ, գազանորսությամբ և ջրային այլ արդյունաբեր զբաղմունքով առանց պատշաճ թույլտվության կամ արգելված ժամանակ կամ արգելված տեղերում կամ արգելված գործիքներով ու յեղանակներով պարապելու համար, կիրառվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ՝



մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև 500 ռուբլի, անպայման գրավելով հօգուտ պետության ապօրինաբար ձեռք բերվածը բոլոր դեպքերում, գրավելով կամ առանց գրավելու որսի գործիքները և ապօրինի զբաղմունքի համար ծառայող նավերն իրենց բոլոր պատկանելիքներով:

111. ա. Որսած ձուկը՝ ձկնորսական յուրաքանչյուր շրջանի վերաբերյալ սահմանված չափից ավելի քանակությամբ և առանց պատշաճ թույլտվության վաճառքի համար գնելու, կամ թե վաճառքի նպատակով վերամշակելու համար գնելու, նաև որսած ձուկն օրենքով թույլատրված՝ ձուկ վերամշակող հատուկ գործարաններից դուրս, որպես արհեստ, վերամշակելու դեպքում կիրառվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով գրավելով ապօրինի կերպով գնված և վերամշակված ձուկը:

112. Սահմանված կանոնների խախտմամբ յերկրի ընդերքը մշակելու համար կիրառվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով, կամ տուգանք մինչև 500 ռուբլի:

112.ա) Մասնավոր ձեռնարկություններին, կազմակերպություններին և անձանց հատկացված հողամասերում արդյունահանվող ոսկին հանձնելու կանոնները նրանց կողմից խախտելու համար կիրառվում են.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա մի մասի գրավմամբ, կամ տուգանք մինչև 3000 ռուբլի:

113. Ամուսնությանը խոչընդոտ հանդիսացող հանգամանքները թաքցնելու, այլ և քաղաքացիական կացության ակտերի տոմարագրությունը վարող մարմիններին սուտ տեղեկություններ հաղորդելու համար կիրառվում է.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով, կամ տուգանք մինչև մեկ հազար ռուբլի:

114. Իշխանության կարգադրությամբ որոշ առարկաների կամ շենքերի պահպանության նպատակով դրված կնիքները պոկելու կամ վնասելու համար կիրառվում են.—

հարկադիր աշխատանքներ՝ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

115. Ինքնիրավության համար, այսինքն՝ յերբ որևէ մեկը ինքնագլուխ կերպով անկախ սահմանված իշխանությունից, իրականացնում է իր իսկական կամ յենթադրյալ իրավունքը, որի դեմ վիճում է մեկ ուրիշը, կիրառվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

116. Առանց օրինական իրավունքի խորհուրդների և նրանց հա—

Թղումարների ընտրությանը մասնակցելու համար կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև 500 ռուբլի:

116. ա. Գյուղում վարձու աշխատանք կատարող անձանց ընտրական իրավունքներն իրականացնելու դեմ արգելքներ հարուցելու համար կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգհարյուր ռուբլի:

117. Վկայի կողմից հետաքննության, քննչական կամ դատական մարմինների դատակոչով ներկայանալուց խուսափելու կամ ցուցմունքներ տալուց հրաժարվելու, այլ և ներկայանալուն խոչընդոտ հանդիսանալու համար այն անձի կողմից, վորից չներկայացողը նյութապես կամ ծառայությամբ կախված է, կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հարյուր ռուբլի:

Փորձագետի, թարգմանի կամ ընթերակայի կողմից նույն մարմինների դատակոչով ներկայանալուց խուսափելու կամ իրենց վրա դրված պարտականությունները կատարելուց հրաժարվելու համար, այլ և ժողովրդական ատենակալի պարտականությունները կատարելուն խոչընդոտ հանդիսանալու համար այն անձի կողմից, վորից չներկայացողը նյութապես կամ ծառայությամբ կախված է, կիրարկվում է.—

տուգանք մինչև հիսուն ռուբլի:

Ժողովրդական ատենակալի պարտականությունները կատարելուց խուսափելու համար կիրարկվում է.—

տուգանք մինչև յերեք ռուբլի:

118. Պատշաճ իրավունք չունեցող անձանց կողմից Ժնևի 1906 թ. միջազգային կոնվենցիայով սահմանված՝ բանակի սանիտարական ծառայության խորհրդանշանը և հատուկ նշանը (Կարմիր Խաչ և Կարմիր Մահիկը) կրելու համար այլև «Կարմիր Խաչի» և «Կարմիր Մահիկի» անունները գործարանային և առևտրական նշանների միջոցով առևտրական նպատակներով և կամ ընդհանրապես անձնական վորևէ շահ ստանալու դիտավորությամբ օգտագործելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով գույքի մասնակի գրավմամբ կամ տուգանք մինչև մեկ հազար ռ.:

119. Դատական-քննչական մարմնին կամ քրեական հետապնդություն սկսելու իրավունք ունեցող վորևէ այլ պաշտոնական անձանց առաջ ակնհայտնի սուտ մատնություն անելու, այլ և վկայի, փորձագետի կամ թարգմանի կողմից հետաքննության, նախաքննության կամ գործի դատաքննության պահին ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար կիրարկվում է.—



ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանք մինչև յերեք ամիս ժամանակով:

Ակնհայտնի սուտ մատնություն անելու կամ ցուցմունք տալու համար, յեթե այդ զուգորդված է ա) ծանր հանցանք գործելու մեղադրանքի, բ) շահադիտական միտումների և գ) մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելու հետ, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև 2 տարի ժամանակով:

119. ա. Ֆինանսների պլանի իրագործման, առկա ապրանքների և այլ տվյալների մասին Պետբանկին կամ վարկային այլ հիմնարկներին ակնհայտնի սխալ տեղեկություններ հաղորդելու համար, յեթե այդ տեղեկությունները կլիենտները պարտավոր են հաղորդել վարկային հիմնարկություններին, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով:

120. Առանց դատախազի, քննիչի կամ հետաքննության կամ վերստուգություն կատարող այլ պաշտոնյայի թույլտվության՝ հետաքննության, նախաքննության կամ վերստուգիչ հետազոտության տվյալները հրապարակելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

121. Աշխատավորների՝ Քաղաքացիական Օրենսգրքի 156-րդ հոդվածով նախատեսված կատեգորիաներից իշխանության համապատասխան մարմինների կողմից սահմանված չափից ավելի բնակարանավարձ վերցնելու համար, այլ և հարկադիր կերպով առանց դատարանի վորոշման բնակարանից վտարելու համար, բացառությամբ վարչական կարգով վտարելու այն դեպքերի, վորոնք նախատեսված են հիմնարկություններին և ձեռնարկություններին հատկացված տների վերաբերյալ հատուկ օրենքի կարգով, կիրարկվում են—

հարկադիր աշխատանքներ՝ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

122. Բնակարաններ և սենյակներ գնելու և ծախելու համար, այսինքն՝ քաղաքային—քաղաքայնացված և պետականացված տիրապետություններում բնակելի տարածություն հատկացնելու դեպքում բացի բնակարանավարձից վարձատրություն տալու և ստանալու համար, բացառությամբ. կառուցման իրավունքով տրվող տիրապետությունների, կիրարկվում է—

տուգանք վոչ ավելի, քան պայմանավորված վճարի հնգապատիկի չափով:

123. Հատկապես արգելված կամ սահմանափակված ապրանքներ, նյութեր և շինվածքներ պատրաստելու, պահելու կամ վաճառելու նպատակով գնելու, ինչպես նաև վաճառելու համար, յեթե այդ կատարվում է վորպես արհեստ, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով գույքի գրավմամբ և առանց գրավելու իրավունքից զըրկելով:

124. Բաժի կանոնները կամ պատենտային առանձին տուրքի կանոնները խախտելու համար կիրարկվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք՝ մինչև մեկ հազար ռուբլի, յերկու դեպքումն էլ գրավելով հօգուտ պետության պատշաճ չափով չվճարված բաժի յենթակա առարկաները, նրանց պատրաստելու գործիքները և հում նյութերը, յեթե միայն հիշյալ խախտումներն որենքի հիման վրա հետապնդելի չեն վարչական կարգով:

125. Հողաշինարարության կամ յերկրաբաշխական, հողաբաշխական, լեռնահատակման և տեղագրական աշխատանքներ կատարելու ժամանակ ժամանակավորապես կամ ընդմիշտ դրված հատուկ նշաններ վոչնչացնելու, փչացնելու, քանդելու կամ տեղափոխելու, այլ և վոչ պատշաճ վայրերում կամայական կերպով նոր նշաններ դնելու համար, կիրարկվում են—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

126. Վաճառելու նպատակով առանց պատշաճ թույլտվության կամ որենքով սահմանված աստիճանից թունդ գինի, ողի և առհասարակ վոգելից խմիչքներ և ալկոհոլ պարունակող նյութեր պատրաստելու համար, այլ և այդ խմիչքներն ու նյութերը վաճառելու կամ վաճառելու նպատակով պահելու համար, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով, գույքի մի մասի գրավմամբ կամ առանց դրան:

127. Վաճառելու նպատակով գաղտնի ողի քաշելու և պահելու, այլ և վորպես արհեստ՝ ողու գաղտնի առևտուր անելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև 500 ռ., գրավելով ողին և ողի քաշելու գործիքները:

Առանց վաճառելու նպատակի ողի քաշելու և պահելու համար, այլ և վոչ վորպես արհեստ ողու գաղտնի առևտուր անելու համար կիրարկվում է—

վարչական կարգով նշանակվող հարկադիր աշխատանք մինչև մեկ ամիս ժամանակով, կամ տուգանք մինչև 100 ռուբլի:

128. Գաղտնի ողի քաշելու հատուկ գործիքներ պատրաստելու, պահելու, կարկատելու և վաճառելու համար, յեթե այդ կատարվում է վորպես արհեստ կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչեվ մեկ տարի ժամանակով, կամ տուգանք մինչեվ 500 ռուբ.

Նույն գործողությունների համար, յեթե նրանք արհեստի բնույթ չեն կրում կիրարկվում են.—

վարչական կարգով նշանակվող հարկադիր աշխատանքներ մինչեվ մեկ ամիս ժամանակով կամ տուգանք մինչեվ 100 ռուբլի:



129. Վաճառելու նպատակով առանց պատշաճ թույլտվության կոկային, աֆիոն, մորֆին, յեթեր և այլ արբեցուցիչ ու թմրեցուցիչ նյութեր պատրաստելու և պահելու կամ վաճառելու համար, կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով՝ գույքի մասնակի գրավմամբ, կամ առանց դրան:

Նույն գործողությունների համար, յերբ կատարվում են վորպես արհեստ, այլ և վորջեր պահելու համար, վորտեղ վաճառվում և գործածվում են այս հոդվածում մատնանշված նյութերը, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով ամբողջ գույքի գրավմամբ:

130. Առևտուրը կարգավորող կանոնները խախտելու համար, յեթե այդ կանոնների մեջ հատկապես չի մատնանշված վարչական կարգով հետապնդելը կիրարկվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք՝ մինչև 2000 ռուբլի:

Կոոպերատիվ կամ վարկային հիմնարկության վարչական մարմինների կազմին պատկանող անձի կողմից որենքով կամ հիմնարկության կանոնադրությամբ արգելված գործողություններ կատարելու համար կիրարկվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք՝ մինչև 500 ռուբլի:

130 ա. Առևտրական շրջանառությունը կարգավորող մարմինների կողմից ապրանքների ժամկետային, վերջնական և այլ գների, ինչպես նաև սահմանված վերադիրների մասին կայացած վորոշումները խախտելու համար,

բ) սահմանված գներից և վերադիրներից ապրանքի վորակը դիտավորյալ կերպով վատացնելու կամ այլ խորամանկությունների միջոցով խուսափելու համար,

գ) առևտրական շրջանառությունը կարգավորող մարմինների կողմից մթերումներ կատարելու և ապրանքի իրացման պլաններ, առևտրական շրջանառության մասնակցողու կարգ սահմանելու, գործունեության պարտադիր շրջաններ վորոների համար նրանց առևտրական շրջանառությունը կարգավորելու, ինչպես նաև այլ վորոշումները խախտելու համար, յերբ այդ վորոշումներով սահմանված է դատական պատասխանատվություն կիրարկվում են.—

Հարկադիր աշխատանքներ մինչև 1 տարի ժամանակով կամ տուգանք մինչև 500 ռուբլի:

130 բ) Կոոպերատիվ միության (կեղծ—կոոպերատիվի) անվան տակ ձեռնարկություն հիմնելու (կազմակերպիչներ և փաստական ղեկավարներ), ինչպես նաև այդպիսի ձեռնարկությունների

հիմնելուն և նրանց գործունեությանն աջակցելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք՝ մինչև 5000 ռուբլի:

131. Չափերի և կշեռքների ստուգման պալատների կանոնադրությամբ նախատեսնված կանոնները խախտելու համար այն դեպքերում, յերբ դատական պատասխանատվություն է սահմանված, կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչեվ վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչեվ հինգ հարյուր ռուբլի:

132. Առևտրական ձեռնարկության մեջ վոսկե, արծաթե և պլատինե չդրոշմված շինվածքներ պահելու և վաճառելու համար կիրարկվում է—

տուգանք՝ հայտնաբերված առարկաները փորձելու և դրոշմելու համար մետաղագործական պալատի կողմից վերցվող վճարի տասնապատիկից վոչ պակաս չափով, այդ առարկաների գրավմամբ:

133. Գնելու, թաքցնելու և շուկա չհանելու միջոցով ապրանքների գները չարանենգորեն բարձրացնելու համար, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև 3 տարի ժամանակով՝ ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի գրավմամբ կամ առանց դրան:

Նույն գործողությունների համար, յեթե ապացուցված է վոր առևտրականների միջև նախապես համաձայնություն է յեղել, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով ամբողջ գույքի գրավմամբ:

134. Որենքով կամ իշխանության կողմից սահմանված շինարարության, սանիտարական կամ հակահրդեհային կանոնները շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ չպահպանելու կամ խախտելու համար, այլ և լեռնագործության աշխատանքների մեջ անվտանգությունն ու կանոնավորությունը կարգավորող որենքով սահմանված կանոնները խախտելու համար, յերբ այդ ունեցել է ծանր հետևանքներ, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև 3 տարի ժամանակով կամ տու- տուգանք մինչև 3000 ռուբլի:

Նույն գործողությունների համար, յեթե հիշյալ հետևանքները չեն առաջացել, կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ՝ մինչև մեկ ամիս ժամանակով կամ վարչական կարգով դրվող տուգանք՝ մինչև 100 ռուբլի:

134 ա. Հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատի և նրա մարմինների կողմից սահմանված շարժման կարգի ու անվտանգության, պահպանության, տրանսպորտի գույ-



քի պահպանության, տրանսպորտի ապորինի ոգտագործության կանխման ու խափանման, ինչպես նաև սանիտարական և հակահրդեհային ձեռնարկումների վերաբերյալ պարտադիր վորոշումները խախտելու համար, յեթե խախտումը ծանր հետևանքներ է ունեցել, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև 3 տարի ժամանակով կամ տուգանք մինչև 3000 ռուբլի:

134-բ. Նավերի ընդհարումը ծովում կանխելու, ծովային ընդջրյա հեռախոսալարերը պահպանելու և ծովային նավարկությունը կարգավորող՝ որենքով կամ պատշաճ մարմինների կողմից սահմանված այլ կանոնները նավահանգստի ջրերից դուրս խախտելու համար, յեթե խախտումը կատարողի համար պաշտոնեական (ծառայության վերաբերյալ) հանցանք չի հանդիսանում, կիրարկվում է—

տուգանք մինչեվ 300 ռուբլի, իսկ յեթե խախտումը ծանր հետեվանքներ է ունեցել—ազատությունից զրկելը մինչեվ 3 տարի ժամանակով կամ տուգանք մինչեվ 3000 ռուբլի:

134-գ. Ջրոգտագործման և ջրատնտեսական կառուցվածքների և նրանց սպասարկող սարքերի պահպանության կանոնները խախտելու համար, յեթե այդ խախտումը 100 ռուբլուց ավելի վնաս է պատճառել կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչեվ մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչեվ 1000 ռուբլի:

134-դ. Անզգույշ արարքների համար, վորոնց հետեվանքով չորանում կամ վողողվում են ցանքերը, կամ հեղեղվում են ամբողջ գյուղերը կամ առանձին բնակարաններ՝ մարդկային զոհերով կամ առանց դրան, այլ և ջրատնտեսական կառուցումների և նրանց սպասարկող սարքերի գործունեությունը դադարեցնելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:

Նույն այդ արարքների համար, յեթե կատարված է դիտավորյալ կերպով կիրարկվում է—

ազատությունից զրկելը վոչ պակաս, քան 2 տարի ժամանակով:

134ե.— Մասնավոր հատվածի ձեռնարկությունների և կազմակերպությունների հրապարակային հաշվետվության կանոնները խախտելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչեվ 6 ամիս ժամանակով կամ տուգանք մինչեվ 1000 ռուբլի:

134-զ. Ավտո—մոտո տրանսպորտի հաշվառման կանոնները խախտելու դեպքում, կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև մեկ ամիս ժամանակով կամ տուգանք մինչեվ 200 ռուբլի:

134 ե.— Բամբակի ցանքերի տարածության մասին կեղծ տեղեկություններ տալու համար վորպես սոցիալական պաշտպանության միջոց, կիրարկվում է.—
ազատազրկում՝ մինչեվ յերկու տարի ժամանակով:

## ԳԼՈՒԽ 3

## ՊԱՇՏՈՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

135. Իշխանությունը կամ պաշտոնական դիրքն ի չարը գործ դնելու համար, այսինքն՝ պաշտոնյայի այնպիսի գործողությունների համար, վոր նա կարող եր կատարել միայն իր պաշտոնական դիրքի շնորհիվ և վորոնք պաշտոնական անհրաժեշտությունից չբղխելով, առաջացրել են հիմնարկության կամ ձեռնարկության կանոնավոր գործունեության ակներեվ խանգարում, կամ նյութական վնաս են հասցրել նրան, կամ խանգարել են հասարակական կարգը, կամ խախտել են առանձին քաղաքացիների՝ օրենքների պաշտպանությունը վայելող իրավունքները և շահերը, յեթե պաշտոնյայի այդ գործողությունները կատարվել են սիստեմատիկ կերպով կամ շահադիտական կամ անձնական այլ նկատառումներով, կամ թեև չեն ունեցել, բայց պաշտոնյայի համար ակնհայտնի կերպով կարող եյին ունենալ ծանր հետևանքներ կիրարկվում է—
ազատությունից զրկելը վեց ամսից վոչ պակաս ժամանակով:

Ծանոթություն 1.— Պաշտոնատար անձ են համարվում այն անձինք, վորոնք մշտական կամ ժամանակավոր պաշտոն են վարում պետական (խորհրդային) հիմնարկության կամ ձեռնարկության, այլ և այնպիսի կազմակերպության կամ ձեռնարկության միավորության մեջ, վորոնց վրա օրենքով վորոշ պարտականություններ, իրավունքներ և լիազորություններ են դրված՝ տնտեսական, վարչական, արհեստակցական և համապետական այլ խնդիրներ իրականացնելու ասպարեզում:

Ծանոթություն 2.— Արհեստակցական Միությունների պաշտոնյաները ծառայության վերաբերյալ կատարած հանցանքների համար (վատնում, կաշառք և այլն), յեթե պատասխանատվության են յենթարկված արհեստակցական միությունների վորոշումներով, պատասխանատու յեն վորպես պաշտոնի վերաբերյալ հանցագործներ:

Ծանոթություն 3.—Փոխադարձ վարկի ընկերությունների ընտրովի պաշտոն վարող անձինք օրենքներն ու ընկերության կանոնադրությունը խախտելու համար պատասխանատվություն են կրում, վորպես պաշտոնյաներ:

136. Իշխանազանցության կամ ծառայության լիազորությունների սահմաններից դուրս գալու համար, այսինքն այնպիսի գործողություններ կատարելու համար, վորոնք ակներեվ կերպով անցնում են օրենքով պաշտոնյային վերապահված իրավունքների և



լիազորությունների սահմաններից, յեթե կան նախորդ հոդվածում նախատեսված նշաններ՝ կիրարկվում են—
ազատությունից զրկելը վեց ամսից վոչ պակաս ժամանակով:
Այն դեպքերում, յերբ իշխանազանցությունը կամ լիազորությունների սահմաններից դուրս գալը զուգորդվել է նաև բռնության, զենք գործ դնելու կամ տուժողին խիստ տանջանք պատճառող կամ նրա անձնական արժանապատվությունը վիրավորող գործողությունների հետ կիրարկվում է—
ազատությունից զրկելը յերկու տարուց վոչ պակաս ժամանակով:

137. Իշխանության անգործության համար, այսինքն՝ յերբ պաշտոնյան չի կատարում այն գործողությունները, վոր պետք է կատարեր իր ծառայության պարտականությունների համաձայն, յեթե կան 135-րդ հոդ. նախատեսված նշանները, այլ և ծառայության անփույթ վերաբերվելու համար, այսինքն՝ դեպի ստանձնած պաշտոնական պարտականություններն անուշադիր կամ անբարեխիղճ վերաբերվելու համար, վորի հետեվանքով գործերի և հաշվետվությունների մեջ առաջացել է ձգձգում և դանդաղություն, այլ և ծառայության ընթացքում կատարած այլ զանցառությունների համար, յեթե կան նույն նշանները, կիրարկվում է—
ազատությունից զրկելը մինչեվ յերեք տարի ժամանակով:

138. Իշխանությունն ի չարը գործ դնելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության և դեպի ստանձնած պաշտոնական պարտականություններն անփույթ վերաբերվելու համար, յեթե այդ բոլորի հետեվանքով քայքայվել են պաշտոնյայի ղեկավարությանը հանձնված վարչական կենտրոնական ապարատը կամ արտադրության, առևտրի, վարկի և փոխադրության պետական տնտեսական ապարատները, կիրարկվում է—
ազատությունից զրկելը յերկու տարուց վոչ պակաս ժամանակով:
Իշխանությունը կամ պաշտոնական լիազորությունները ի չարը գործ դնելու, իշխանության կամ պաշտոնական լիազորությունների սահմաններից անցնելու, իշխանության, ծառայության անփույթ վերաբերվելու և բյուրոկրատիզմի մնացած բոլոր դեպքերում, յերբ հիշյալ արարքները չեն կատարվել սիստեմատիկ կերպով, շահադիտական և անձնական շահագրգռության նկատառումներով և չեյին կարող ծանր հետևանքներ առաջացնել կիրարկվում են.—
հարկադիր աշխատանք մինչև 6 ամիս ժամանակով, կամ պաշտոնից հեռացնելը՝ պատճառած վնասը հատուցելու պարտականությամբ կամ առանց դրան:

139.— Իշխանությունը վարկաբեկելու համար, այսինքն, յերբ պաշտոնյան կատարում է այնպիսի գործողություններ, վորոնք թեև նրա պաշտոնական պարտականությունների հետ առնչություն չունեն, բայց աշխատավորների աչքում ակնհայտնի գցում

են իշխանության այն մարմինների արժանապատվությունն ու հե-
ղինակությունը, որոնց ներկայացուցիչն է տվյալ պաշտոնյան
կիրառվում են—
ազատությունից զրկելը մինչև երկու տարի ժամանակով կամ
138 հոդ. երկրորդ մասում մատնանշված սոցիալական պաշտ-
պանության միջոցները:
140. Դատավորների կողմից չարադիտական կամ անձնական
այլ նկատառումներով անարդար դատավճիռ, վճիռ կամ որոշում
կայացնելու համար կիրառվում է ազատությունից զրկելը երկու
տարուց ոչ պակաս ժամանակով:
141. Ապօրինաբար կալանավորելու կամ ապօրինաբար բերել
տալու համար կիրառվում է—
ազատությունից զրկելը՝ մինչև մեկ տարի ժամանակով:
Հարցաքննություն կատարող անձի կողմից քննության ժամա-
նակ ապօրինի միջոցներ գործ դնելով ցուցմունքներ տալուն
բռնադատելու, այլև անձնական կամ չարադիտական նպա-
տակներով որպես խափանման միջոց կալանքի տակ առնելու
համար, կիրառվում է—
ազատությունից զրկելը՝ մինչև հինգ տարի ժամանակով:
142. Պաշտոնյայի կամ պետական կամ հասարակական հիմ-
նարկության հանձնարարությամբ որևէ պարտականություններ
կատարելու լիազորություն ունեցող անձի կողմից պաշտոնական
դիրքի կամ պարտականություններ կատարելու հետևանքով իր
տրամադրության տակ գտնվող դրամը, թանգարժեք իրերը կամ
այլ գույք յուրացնելու կամ վատնելու համար կիրառվում է.—
ազատությունից զրկելը մինչև երեք տարի ժամանակով:
Նույն անձնավորությունների կողմից կատարված յուրացման
և վատնումի համար, եթե նրանք հատուկ լիազորություններ
ունեցող պաշտոնյաներ են եղել, կամ եթե առանձնապես
կարևոր պետական արժեքներ են յուրացրել, կիրառվում է—
ազատությունից զրկելը երկու տարուց ոչ պակաս ժամանա-
կով և գույքի գրավմամբ:
143. Պաշտոնյայի կողմից անձամբ կամ միջնորդների միջո-
ցով, ինչ ձևով էլ որ լինի, կաշառ առնելու համար հօգուտ կա-
շառ տվողի որևէ գործողություն կատարելու կամ չկատարելու
նպատակով, որը սակայն պաշտոնյա անձը կարող էր և պետք է
կատարեր բացառապես իր պաշտոնական դիրքի հետևանքով, կի-
րառվում է—
ազատությունից զրկելը մինչև երկու տարի ժամանակով:
Եթե կաշառք ստանալը տեղի յե ունեցել հանգամանք ծանրա-
ցնող հանգամանքներում, այն է՝
ա) կաշառք ստացող պաշտոնյան պատասխանատու դիրք է
ունեցել,
բ) Անցյալում կաշառակերության համար դատապարտված է
եղել կամ կաշառք է ստացել մեկից ավելի անգամ,



գ) կաշառք ստացողը կաշառակերության է դիմել՝ կիրառք-
վում է—
ազատությունից զրկելը երկու տարուց ոչ պակաս ժամա-
նակով, գույքի գրավմամբ:
144. Կաշառք տալու և կաշառակերության միջնորդության
համար կիրառվում է—
ազատությունից զրկելը՝ մինչև հինգ տարի ժամանակով:
Ծանոթություն.— Այն անձինք, որոնց վրա տարած-
վում է այս հոդվածի ներգործությունը, ազատվում են պա-
տասխանատվության ենթարկվելուց այն դեպքում, եթե
ա) նրանց նկատմամբ կաշառակորզություն է տեղի ունե-
ցել, և բ) եթե նրանք կաշառք տալուց հետո անմիջապես
կամավոր կերպով հայտնել են կատարվածի մասին:
145. Կաշառատվության պրովոկացիայի համար, այսինքն՝
երբ պաշտոնյան ակնհայտնի կերպով կաշառք առաջարկելու կամ
կաշառք ստանալու հանգամանքներ և պայմաններ է ստեղծում,
որպեսզի հետագայում մեղադրի կաշառք տվողին կամ ընդունո-
ղին, կիրառվում է—
ազատությունից զրկելը՝ մինչև երկու տարի ժամանակով:
146. Պաշտոնեական կեղծիքի համար, այսինքն՝ երբ պաշտոն-
յան չարադիտական նպատակով պաշտոնական փաստաթղթերի մեջ
ակնհայտնի սուտ տեղեկություններ է մտցնում, կամ կեղծում
կամ քերվածքներ է անում և թվականները փոխում է, ինչպես
նաև ակնհայտնի կեղծ փաստաթղթեր է կազմում և տալիս, կամ
մատյանների մեջ ակնհայտնի կեղծ գրանցումներ է անում, կի-
րառվում է—
ազատությունից զրկելը մինչև երկու տարի ժամանակով:
Նույն գործողությունների համար, եթե կատարվել են առանց
չարադիտական շարժառիթների, կիրառվում են—
138 հոդ. երկրորդ մասում մատնանշված սոցիալական պաշտ-
պանության միջոցները:
147. Պաշտոնյայի կողմից ոչ հրապարակելի տեղեկություն-
ներ հրապարակելու, հաղորդելու, հանձնելու կամ հանձնելու
նպատակով այդ տեղեկությունները հավաքելու համար, կիրառկ-
վում է.—
ազատությունից զրկելը՝ մինչև երեք տարի ժամանակով կամ
138 հոդ. 2-րդ մասում մատնանշված սոցիալական պաշտպա-
նության միջոցները:

## ԳԼՈՒԽ 4

## ՑԵԿԵՂԵՑԻՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՆՋԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

148. Պետական կամ մասնավոր կրթական հաստատություննե-
րում և դպրոցներում փոքրահասակներին կամ անչափահասներին

կրոնական վարդապետություններ դասավանդելու համար այդ մասին սահմանված կանոնները խախտելով, կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև մեկ տարի ժամանակով:

149. Ազգաբնակության մասսաների մեջ սնապաշտություն առաջացնելու կամ այդ միջոցով վորևե շահ ստանալու նպատակով խաբեբայական գործողություններ կատարելու համար կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև մեկ տարի ժամանակով՝ գույքի մասնակի գրավմամբ կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

150. Յեկեղեցական և կրոնական խմբակցությունների ոգտին հարկադիր կարգով տուրքեր գանձելու համար կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

151. Կրոնական կամ յեկեղեցական կազմակերպությունների կողմից վարչական-դատական կամ հանրային-իրավական այլ ֆունկցիաներ և իրավական անձանց իրավունքներ յուրացնելու համար կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք՝ մինչև յերեք հարյուր ռուբլի:

152. Պետական և հասարակական հիմնարկություններում և ձեռնարկություններում կրոնական ծեսեր կատարելու, այլ և այդ հիմնարկություններում և ձեռնարկություններում կրոնական վորևե պատկերներ կախելու համար կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

153. Կրոնական ծեսեր կատարելուն արգելք հանդիսանալու համար, ինչ չափով վոր նրանք հասարակական կարգը չեն խանգարում և չեն զուգորդվում քաղաքացիների իրավունքների դեմ կատարվող վոտնձգությունների հետ, կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով:

## ԳԼՈՒԽ 5

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

154 Պետական կամ հասարակական հիմնարկությունների ու ձեռնարկությունների գլուխ կանգնած անձանց կամ այդ հիմնարկությունների և ձեռնարկությունների լիազորների անտնտեսության համար, վոր առաջ է յեկել դեպի ստանձնած գործն անփույթ և անբարեխիղճ վերաբերվելուց, և վորի հետևանք է յեղել հիմնարկությունների և ձեռնարկությունների գույքի վատնումը կամ անհատուցանելի վնասը, կիրառվում են.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տ. ժամանակով,



իսկ յեթե հասցրած վնասն աննշան է,—138-հոդ. յերկրորդ մասում մատնանշված սոցիալական պաշտպանության միջոցները:

155. Պետական կամ հասարակական գույքը հափշտակելու համար, մասնավորապես՝ պետական կամ հասարակական հիմնարկության կամ ձեռնարկության գլուխ կանգնած անձի կողմից վոչ ձեռնտու գործարքներ կնքելու միջոցով, վորը կատարվել է այդ հիմնարկությունների կամ ձեռնարկությունների պայմանադիրների հետ համաձայնության գալով, կիրառվում է.—

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով՝ ամբողջ գույքի կամ նրա մի մասի գրավմամբ կամ առանց դրան:

156. Պայմանագրի համաձայն տրամադրված պետական կամ հասարակական գույքը վարձկալի կամ իրավական անձի լիազորի կողմից վատնելու համար, կիրառվում է.—

ազատությունից զրկելը վեց ամսից վոչ պակաս ժամանակով՝ պայմանագրի լուծմամբ և ամբողջ գույքի կամ նրա մի մասի գրավմամբ:

157. Պետական կամ հասարակական հիմնարկության կամ ձեռնարկության հետ կնքած պայմանագրից բղխող պարտավորությունները չկատարելու համար, յեթե գործը Քաղաքացիական Դատավարության կարգով քննելու ժամանակ պարզվել է չկատարելու չարամիտ բնույթը, կիրառվում է.—

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով՝ ամբողջ գույքի կամ նրա մեկ մասի գրավմամբ:

157. ա. Կոնտրակտացիոն պայմանագրից բղխող պարտավորությունները չկատարելու համար, յեթե գործը Քաղաքացիական Դատավարության կարգով քննելու ժամանակ ապացուցվի պայմանագիրը չկատարելու ակնհայտ չարամիտ բնույթը, քաղաքացիական գործ քննող դատարանի կողմից կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

158. Այս որենսգրքի 154–157 հոդ. նախատեսված գործողությունները պատերազմական պայմաններում կամ այնպիսի հանգամանքներում կատարելու համար, վորոնք կապված են կարմիր բանակին և նավատորմին հայթայթման նյութեր մատակարարելու հետ և կարող են անդրադառնալ նրանց ռազմունակության վրա, կիրառվում է.—

ազատությունից զրկելը յերկու տարուց վոչ պակաս ժամանակով:

159. Աշխատանքի կիրառությունը կարգավորող, այլ և աշխատանքի պաշտպանության և սոցիալական ապահովագրության վերաբերյալ որենքներ խախտելու համար՝ մասնավոր վարձկալի, ինչպես նաև պետական կամ հասարակական հիմնարկությունների կամ ձեռնարկությունների համապատասխան անձանց կողմից, կիրառվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

Ցեթե այդ խախտումն ընդգրկում է յերեք հոգուց վոչ պակաս կազմ ունեցող բանվորների խումբ, միատեսակ է իր բնույթով՝ տվյալ խմբի մեջ մտնող բոլոր անձանց նկատմամբ և կատարված է բոլորի վերաբերմամբ միաժամանակ, կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև տաս հազար ռ.:

Աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելով աշխատավորին աշխատանքի այնպիսի պայմանների մեջ դնելու համար, վորի հետևանքով նա իր աշխատունակությունը կորցրել է կամ կարող է կորցնել, կիրարկվում են.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով և կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

Իշխանության տեղական մարմինների կ ղմից պարտադիր վորոշումների կարգով, այլև Աշխատանքի ժողովրդական Կոմիսարիատի վորոշումներով, հրամաններով և հրահանգներով սահմանված աշխատանքի պաշտպանության, անվտանգության տեխնիկայի, արդյունաբերական սանիտարիայի և առողջապահության վերաբերյալ կանոնները խախտելու համար, կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև մեկ ամիս ժամանակով կամ վարչական կարգով դրվող տուգանք մինչև հարյուր ռուբլի:

159. ա. Այն դեպքերում, յերբ աշխատանքի մարմինների վարիչները և հիմնարկների, ձեռնարկությունների ու տնտեսությունների ղեկավարները խախտում են բանվորական ուժ վարձելու և բաշխելու վերաբերյալ օրենքները, նաև յերբ ճարտարագիտական-տեխնիկական աշխատակիցները խուսափում կամ հրաժարվում են աշխատանքի պաշտպանության մարմինների, տնտեսական հիմնարկների ու ձեռնարկությունների հայտերով և Արհմիության համաձայնության փոխադրվել արդյունաբերական կարևորագույն ճյուղերում կամ այլ վայրերում ըստ մասնագիտության աշխատելու՝ կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով, կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

160. Վարձկալի կողմից արհեստակցական միության հետ կընքած հավաքական պայմանագրերը, տարիֆային համաձայնությունները և հաշտարար ատյանների համաձայնությունները խախտելու համար, յեթե գործը դատական կամ հաշտարար կարգով քննելու ժամանակ հաստատված է խախտումների չարամիտ բնույթը, կիրարկվում են.—

159-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով մատնանշված միջոցները:

161. Գործարանային և տեղական կոմիտեների, արհեստակցական միությունների և նրանց լիազորների օրինական գործունեության դեմ արգելքներ հարուցելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև մեկ հազար ռուբլի:

161. ա. Միաժամանակ յերկու կամ ավելի փոխադարձ վարկային ընկերություններում մասնակցելու համար կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև հարյուր ռուբլի:

161. բ. Արդյունաբերական և առևտրական ձեռնարկություններից մասսայական կամ սիստեմատիկ կերպով վատորակ արտադրանք բաց թողնելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:

161. գ) Սահմանված ստանդարտները չպահպանվելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:

ԳԼՈՒԽ 6

## ԿՅԱՆՔԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ, ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՊԱՏՎԻ ԴԵՄ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

162. Դիտավորյալ սպանության համար, վոր կատարվել է ա) շահից կամ խանդից դրդված (յեթե այդ չունի 164-րդ հոդ. նշանները) և այլ ստոր դրդումներից, բ) դիտավորյալ սպանության կամ մարմնական վնասվածք հասցնելու համար անցյալում պատասխանատվության յենթարկված և դատարանի նշանակած սոցիալական պաշտպանության միջոցը կրած անձի կողմից, գ) շատերի կյանքի համար վտանգավոր կամ սպանվածի համար առանձնապես տանջալից յեղանակով, դ) մի այլ ծանր հանցագործություն դյուրացնելու կամ ծածկելու նպատակով, ե) մի անձի ձեռքով, վորի պարտականությունն է յեղել առանձնապես հոգ տանել սպանվածի մասին, կամ զ) սպանվածի անօգնական վիճակից օգտվելով, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև տաս տարի ժամանակով:

163. Առանց 162-րդ հոդվածում հիշատակված նշանների կատարված դիտավորյալ սպանության համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև ութ տարի ժամանակով:

164. Տուժողի կողմից գործադրված բռնության կամ ծանր վիրավորանքի ազդեցության տակ առաջացած հոգեկան և հանկարծական հուզման վիճակում կատարված դիտավորյալ սպանության համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:

165. Անզգուշությամբ, այլ և անհրաժեշտ ինքնապաշտպանու—

թյան սահմաններից անցնելու հետևանքով կատարված սպանության համար կիրառվում են.—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:

166. Մոր համաձայնությամբ կատարված վիժեցման համար, յերբ այդ կատարվել է այնպիսի անձանց ձեռքով, վորոնք չունեն բժշկական պատշաճ պատրաստություն, կամ յեթե ունեն ել, սակայն գործել են հակասանիտարական պայմաններում, կիրառվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռ.:

Յեթե այդ գործողությունները կատարվել են այս հոդ. 1-ին մասում մատնանշված պայմաններում՝ վորպես արհեստ կամ առանց մոր համաձայնության, և կամ յեթե դրան հետևանք է յեղել մոր մահը, կիրառվում է.—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

167. Նյութական կամ վորևե այլ կերպ մեկ ուրիշից կախված անձին առաջինի կողմից գործադրվող դաժան վերաբերմունքի միջոցով կամ այլ յեղանակով մինչև ինքնասպանության կամ ինքնասպանության փորձը հասցնելու համար կիրառվում է.—

ազատությունից զրկելը՝ մինչև հինգ տարի ժամանակով:

Անչափահասին կամ այնպիսի անձին, վոր ակնհայտնի կերպով անընդունակ է հասկանալու իր արարքի եյությունը կամ նշանակությունը կամ ինքն իրեն ղեկավարելու՝ ինքնասպանություն գործելուն համոզելու և աջակցելու համար, յեթե ինքնասպանությունը կամ փորձը տեղի յե ունեցել, կիրառվում է.—

ազատությունից զրկելը՝ մինչև հինգ տարի ժամանակով:

168. Դիտավորյալ կերպով մարմնական ծանր վնասվածք հասցնելու համար, վորի հետևանքն է յեղել տեսողության, լսողության կամ մի այլ գործարանի կորուստը, դեմքի անջնջելի այլանդակումը, հոգեկան հիվանդությունը կամ առողջության վորևե այլ քայքայումը, վորը զուգորդված է աշխատունակության զգալի չափով կորցնելու հետ, կիրառվում է.—

ազատությունից զրկելը մինչև ութ տարի ժամանակով:

Յեթե այդ տեսակ վնասվածքից մահ է առաջացել, կամ յեթե այդ կատարվել է տանջելու կամ խոշտանգելու բնույթ ունեցող յեղանակով, կամ յեթե այդ հետևանք է յեղել սիստեմատիկ կերպով հասցրած թեկուզ և թեթև վնասվածքների, կիրառվում է.—

ազատությունից զրկելը մինչև տաս տարի ժամանակով:

169. Դիտավորյալ կերպով կյանքի համար անվտանգ, սակայն առողջությունը քայքայող մարմնական թեթև վնասվածք հասցնելու համար, կիրառվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:



Դիտավորյալ կերպով՝ առողջությունը չքայքայած մարմնական թեթև վնասվածք հասցնելու համար կիրառվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

170. 169-րդ հոդվածի առաջին մասի նշաններն ունեցող մարմնական վնասվածք հասցնելու համար վորը տեղի յե ունեցել տուժողի կողմից անձի վերաբերմամբ գործադրված բռնությունից կամ ծանր վիրավորանքից առաջացած հոգեկան սաստիկ և հանկարծական հուզման ազդեցության տակ, կիրառվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հարյուր ռուբլի:

171. Անզգուշությամբ մարմնական վնասվածք հասցնելու համար, յեթե այդ հետևանք է յեղել որենքով կամ իշխանության կարգադրություններով սահմանված նախազգուշության կանոնները գիտակցաբար չկատարելու հետևանքով և ունեցել է 168-րդ հոդվածի և 169-րդ հոդվածի առաջին մասի մեջ մատնանշված հետևանքները, կիրառվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

Անզգուշությամբ մարմնական այնպիսի վնասվածք հասցնելու համար, վոր ծանր հետևանքներ չի ունեցել, կիրառվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

172. Դիտավորյալ կերպով հարվածելու, ծեծելու կամ ֆիզիկական ցավ պատճառող այլ բռնի գործողություններ կատարելու համար կիրառվում են—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

Յեթե այդ գործողությունները խոշտանգման բնույթ են ունեցել —

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

173. Վորևե մեկին ապորինաբար ազատությունից զրկելու համար կիրառվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:

Ազատությունից զրկելու համար յեթե այդ տեղի յե ունեցել տուժողի կյանքի կամ առողջության համար վտանգավոր յեղանակով, կամ զուգորդված է յեղել ֆիզիկական տանջանքներ պատճառելու հետ, կիրառվում է —

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով:

174. Շահադիտական կամ այլ անձնական նկատառումներով ակնհայտնի առողջ մարդուն հոգեկան հիվանդների հիվանդանոցում զետեղելու համար կիրառվում է —

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

175. Շահադիտական նպատակով, վրեժխնդրությունից դրդված, կամ այլ անձնական նկատառումներով ուրիշի յերեխային առևանգելու, թաքցնելու կամ փոխելու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

176. Ուրիշին վեներական ախտով վարակելու համար այն անձի կողմից, վորը տեղյակ է իր հիվանդ լինելու մասին, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

Սեռային հարաբերությունների կամ այլ գործողությունների միջոցով մեկ ուրիշին ակնհայտնի կերպով վեներական ախտով վարակվելու վտանգին յենթարկելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով:

177. Արբունքի չհասած անձանց հետ սեռային հարաբերություն ունենալու համար, վոր զուգորդված է մանկապղծության կամ կուսապղծության հետ և կամ թե կատարվել է սեռական կրքերին խաթարված ձևով հագուրդ տալու յեղանակով, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև ութ տարի ժամանակով:

Արբունքի չհասած անձանց հետ առանց վերոհիշյալ ծանրացնող նշանների, սեռային հարաբերություն ունենալու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով: ,

178. Արբունքի չհասած անձանց կամ փոքրահասակներին նրանց վերաբերմամբ կատարվող անբարոյական գործողությունների միջոցով անառակացնելու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

179. Սեռային հարաբերություն ունենալու համար, յեթե այդպիսին տեղի յե ունեցել ֆիզիկական բռնության, սպառնալիքներ գործադրելու, վախեցնելու կամ խաբեբայությամբ տուժողի անօգնական վիճակից օգտվելու միջոցով (բռնաբարություն), կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

Յեթե բռնաբարության հետևանքով տուժողն ինքնասպանություն է գործել, կամ յեթե այդ կատարվել է արբունքի չհասած անձի վերաբերմամբ և կամ թեկուզ և արբունքի հասած անձի վերաբերմամբ, սակայն՝ մի քանի անձանց կողմից, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև ութ տարի ժամանակով:

180. Կնոջը սեռային հարաբերություն ունենալուն և կամ սեռային կիրքը վորևէ այլ ձևով բավարարելուն բռնադատելու համար, յերբ այդ բռնադատությունը տեղի յե ունեցել այն անձի կողմից, վորից այդ կինը նյութապես կամ ծառայությամբ կախումն է ունեցել, կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

181. Պոռնկությամբ պարապելուն բռնադատելու, կավատու-



թյան, անառականոցներ պահելու, այլ և պոռնկության նպատակով կանանց հավաքելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա մի մասի գրավմամբ:

182. Կյանքի համար վտանգավոր դրության մեջ գտնվող կամ փոքրահասակության, ծերության, հիվանդության և ընդհանրապես իր անօգնական վիճակի հետևանքով ինքնապաշտպանության հնարավորությունից զուրկ անձին ակնհայտնի անօգնական վիճակում թողնելու համար, յեթե առանց օգնության թողնողը պարտավոր է հոգալու անօգնական վիճակում թողնված անձի մասին և օգնության հասնելու հնարավորություն ուներ, կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով, կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

182. ա. Ծովի վրա կամ ջրային այլ ճանապարհներում կորըստյան վտանգի յենթարկված անձանց նավապետի կողմից օգնություն ցույց չտալու համար, յեթե այդ օգնությունը կարող է ցույց տրվել առանց նավը, ծառայողներին և ուղևորներին լուրջ վտանգի յենթարկելու, կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով:

183. Առանց հարգելի պատճառների հիվանդին օգնություն չհասցնելու համար այն անձի կողմից, վորն ըստ օրենքի կամ հատուկ կանոնի պարտավոր է այդ օգնությունը հասցնելու, կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

Բժշկական գործունեությամբ զբաղվող անձի կողմից բժշկական օգնություն հասցնելուց հրաժարվելու դեպքում, յեթե այդ հրաժարվելը հիվանդի համար ակնհայտնի վտանգավոր հետևանքներ կարող եր ունենալ, կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև մեկ հազար ռուբլի:

184. Դատարանի կողմից վորոշված ապրուստի միջոցները վճարելուց չարամիտ կերպով խուսափելու համար այն դեպքում, յերբ վճարելը հնարավոր է, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

Ծնողների կողմից իրենց փոքրահասակ զավակներին առանց վորևէ օգնության թողնելու, այլ և նրանց մուրացկանությամբ պարապելուն բռնադատելու համար, կիրարկվում են —

սոցիալական պաշտպանության նույն միջոցները:

185. Վորևէ մեկին խոսքով կամ գրավոր վիրավորանք հասցնելու համար, կիրարկվում է —

տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի կամ հասարակական պարսավանք:

Որևէ մեկին գործողությամբ հասցրած վիրավորանքի համար կիրարկվում են—

հարկադիր աշխատանքներ մինչև յերկու ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի։

186. Տարածված կամ ի ցույց հանրության դրված հրատարակությունններում կամ նկարներում վիրավորանք հասցնելու համար կիրարկվում են —

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի։

187. Զրպարտության, այսինքն՝ ուրիշին նշավակող ակնհայտնի սուտ հերյուրանքներ տարածելու համար կիրարկվում են—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի։

Տպագրության և կամ որևէ այլ միջոցով բազմացրած հրատարակության մեջ զրպարտելու համար կիրարկվում են—

հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև մեկ հազար ռուբլի։

## ԳԼՈՒԽ 7

## ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

188. Կնոջը՝ առանց նրա համաձայնության հետո ամուսնանալու կամ սեռական հարաբերություն ունենալու նպատակով առևանգելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով։

Ամուսնական տարիքը չհասած կնոջը՝ նրա հետ սեռական հարաբերություն ունենալու նպատակով առևանգելու համար, անկախ նրա համաձայնությունից, ինչպես նաև կնոջը վաճառելու, անառակատներում տեղավորելու կամ որևէ այլ նպատակով առևանգելու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև ութ տարի ժամանակով։

189. Կնոջն իր կամքին հակառակ ամուսնացնելուն բռնադատելու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով։

190. Ամուսնական տարիքը չհասած անձի հետ ամուսնանալու կամ այդպիսի ամուսնության բռնադատելու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով։

Արբունքի չհասած անձի հետ ամուսնանալու կամ այդպիսի ամուսնության բռնադատելու համար կիրարկվում են.—

Քրեական Օրենսգրքի 177-րդ հոդվածով նախատեսնված սոցիալական պաշտպանության միջոցները։

191. Հարսնացուի համար նրա ծնողներին, ազգականներին, կամ բարեկամներին փեսացույի, նրա ծնողների կամ բարեկամների կողմից դրամով, անասուններով, կամ այլ գույքով կամ թե անձնական աշխատանքով փոխհատուցում (ղալիմ) տալու համար կիրարկվում է—



ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով։ Փոխհատուցումն ընդունելու համար.—

Նույն միջոցները, ստացած փոխհատուցումը գրավելով կամ արժեքը բռնագանձելով։

192. Յերկկնության կամ բազմակնության համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով։

Ծանոթություն.—Յերկկնությունը և բազմակնությունը նախատեսնող քրեական օրենսգրքի ուժը չի տարածվում այն կենակցությունների վրա, վորոնք ծագել են այս օրենսգրքի հրատարակումից առաջ կատարված ամուսնություններին։

## ԳԼՈՒԽ 8

## ՍՏԱՑՎԱԾԱՅԻՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

193. Ուրիշի գույքը գաղտնի հափշտակելու (գողության) համար—

ա. յեթե այդ տեղի յե ունեցել առանց վորևե տեխնիկական միջոցներ գործադրելու, առաջին անգամ և առանց այլ անձանց հետ համաձայնության գալու, կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև յերեք ամիս ժամանակով։

Նույն պայմաններում նույն հանցանքը գործելու համար, յեթե այդ կատարվել է կարիքի և գործազրկության հետևանքով՝ իր կամ իր ընտանիքի նվազագույն կարիքներին բավարարություն տալու նպատակով, կիրարկվում են.—

հարկադիր աշխատանքներ մինչև յերեք ամիս ժամանակով։

բ. Յեթե գողությունը տեղի յե ունեցել յերկրորդ անգամ կամ այնպիսի գույքի նկատմամբ, վոր ակնհայտնի անհրաժեշտ եր տուժողի գոյության համար—

ազատությունից զրկելը մինչև վեց ամիս ժամանակով։

գ. Յեթե գողությունը տեղի յե ունեցել տեխնիկական միջոցների գործադրմամբ, կամ կատարվել է մեկ անգամից ավելի կամ այլ անձանց հետ նախապես համաձայնության գալով, այլ և թեպետ և առանց հիշյալ պայմանների, բայց յեթե կատարվել է պետական ու հասարակական հաստատություններից, կայարաններից նավահանգիստներից, նավերից, վագոններից և հյուրանոցներից—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով։

դ) Յեթե գողությունը կատարվել է մասնավոր անձի ձեռքով պետական և հասարակական պահեստներից, վագոններից, նավերից և այլ պահեստատեղերից կամ նախորդ կետում հիշատակված հասարակական օգտագործության վայրերից՝ տեխնիկական միջոցներ գործադրելով կամ այլ անձանց հետ համաձայնության գալով, կամ

մեկ անգամից ավելի, այլ և թեպետ կատարվել է առանց մասնանշված պայմանների, սակայն այնպիսի անձի կողմից, վոր հատուկ մուտք է ունեցել կամ պահպանելիս է յեղել այդ պահեստները կամ հրդեհի, հեղեղման և կամ հասարակական վորևէ այլ աղետի ժամանակ,—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով:

ե) Յեթե գողությունը կատարվել է պետական և հասարակական պահեստներից և պահեստատեղերից այնպիսի անձի կողմից, վոր հատուկ մուտք է ունեցել կամ պահպանելիս է յեղել այդ պահեստները, տեխնիկական միջոցներ գործադրելով կամ մեկ անգամից ավելի կամ նախապես այլ անձանց հետ համաձայնության գալով, այլ և ամեն տեսակ գողությունը նույն այդ պահեստներից և պահեստատեղերից՝ հափշտակվածը առանձնապես խոշոր չափերի հասնելու դեպքում—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

Ծանոթություն.— Յեթե գործարանի բանվորն առաջին անգամ արտադրության նյութերի կամ գործիքների գողություն է անում իր ձեռնարկության սահմաններում, և յեթե գողացածի արժեքը քսան և հինգ ռուբլուց ավելի չէ, կիրարկվում են.—

կարգապահական միջոցներ՝ Աշխատանքի ժողովրդական կոմիսարիատի սահմանած հատուկ աղյուսակի համաձայն:

193—ա. Հրազենի (բացի վորսորդական և փոքրակալիբր զենքից) և հրանյութերի գաղտնի կամ բացահայտ հափշտակության համար, վոր յենթակա չէ այս օրենսգրքի 71—ա հոդվածի 1—ին և 2—րդ մասերի ներգործությանը, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

194. Ելեկտրական էներգիա գողանալու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև մեկ ամիս ժամանակով՝ հասցրած վնասն անպայման հատուցանելու պարտավորությամբ:

195. Ակնհայտնի գողոն գնելու համար կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև 500 ռուբլի:

Նույն գործողությունների համար, յեթե նրանք կատարվում են վորպես արհեստ կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով կամ տուգանք մինչև 3000 ռուբլի:

195. ա. Ակնհայտ հափշտակված հրազեն (բացի վորսորդական ու փոքրակալիբր զենքից) և հրանյութ գնելու, պահելու և վաճառելու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

196. Ուրիշի գույքը տիրոջ, օգտագործողի կամ տնօրինողի ներկայությամբ, բայց առանց բռնություն գործադրելու բացահայտ կերպով հափշտակելու համար (կողոպուտ) կիրարկվում է—



ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով:

Նույն գործողությունների համար, յերբ զուգորդվել են բռնության հետ,—

Նույն գործողությունների համար, յերբ կատարվել են մի խումբ անձանց կողմից կամ յերկրորդ անգամ,—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

197. Աշխատավոր հողագործ բնակչությունից գաղտնի կամ բացահայտ կերպով ձի, կամ այլ խոշոր անասուններ հափշտակելու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

Նույն գործողությունների համար, յեթե կատարվել են կրկնակի կամ այլ անձանց հետ նախապես համաձայնության գալով—

ազատությունից զրկելը մինչև ութ տարի ժամանակով:

198. Ավազակության համար, այսինքն՝ յերբ առանձին անձը ուրիշի գույքին տիրանալու նպատակով բացահայտ և տուժողի կյանքի և առողջության համար վտանգավոր բռնություն գործադրելով հարձակում է գործում նրա վրա, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

Նույն գործողությունները կրկնակի կատարելու համար—

ազատությունից զրկելը մինչև տաս տարի ժամանակով:

Նույն գործողությունների համար, յերբ թեպետ և կատարվել են առաջին անգամ, սակայն դրանց հետևանքով տուժողը մահացել կամ ծանր խեղանդամություն է ստացել, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև տասը տարի ժամանակով գույքի գրավմամբ, իսկ դատարանի կողմից հանցանք գործած անձը սոցիալապես խիստ վտանգավոր ճանաչվելու դեպքում մինչև գնդակահարություն:

199. Յուրացման, այսինքն՝ վորոշ նպատակներով իրեն վստահած գույքը շահադիտական նպատակով պահելու, այլ և այդ գույքը վատնելու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով:

Գտած գանձը կամ մոլորված անասունները յուրացնելու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև մեկ ամիս ժամանակով:

200. Գույք կամ գույքի վերաբերյալ իրավունք ձեռք բերելու նպատակով վստահությունն ի չարը գործ դնելու կամ խաբեբայություն անելու համար (խարդախություն), կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով:

Յեթե խարդախության հետևանքով վնաս է հասցվել պետական կամ հասարակական հիմնարկության, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

200—ա. Չեկատուի համար ակնհայտնի՝ վճարման վոչ յենթակա չեկ տալու, չեկատուի կողմից չեկն առանց հարգելի պատճառ-

ների վերացնելու կամ չեկի գումարը չեկատուի կողմից ստանալու դեմ որևէ միջոց ձեռք առնելու, ինչպես նաև չեկատուի կողմից նրա համար ակնհայտնի վճարման ոչ ենթակա չեկն ուրիշին հանձնելու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև երկու տարի ժամանակով:

Այն դեպքերում, երբ մասնանշված հանցագործության հետևանքով վնաս է կրում պետական կամ հասարակական հիմնարկը կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

201. Շահադիտական նպատակով պաշտոնական թղթեր, փաստաթղթեր և ստացականներ կեղծելու համար կիրարկվում են—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև մեկ հազար ռուբլի:

202 Շահադիտական նպատակով խաբեբայական եղանակով վաճառքի կամ հանրային օգտագործության համար հատկացված առարկաների տեսքը և հատկությունները փոխելու համար, եթե այդ կարող էր ունենալ և կամ արդեն իսկ ունեցել է առողջության վնասող հետևանքներ, ինչպես նաև այդ առարկաները վաճառելու համար, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով գույքի մասնակի գրավմամբ և առևտրով զբաղվելն արգելելով, կամ տուգանք մինչև մեկ հազար ռուբլի:

203. Մետաղափորձության կեղծ դրոշմ պատրաստելու և այդ վաճառելու նպատակով պահելու համար, ինչպես նայև այդպիսի դրոշմով ոսկու, արծաթի և լուսնոսկու շինվածքներն ու ձուլերը դրոշմելու կամ այլ մետաղներից շինված առարկաների վրա մետաղափորձության դրոշմի նմանություն ունեցող դրոշմեր և նշաններ դնելու, այլ և այդ շինվածքներ վաճառելու համար կիրարկվում են—

ազատությունից զրկելը մինչև երկու տարի ժամանակով կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով,— երկու դեպքում էլ գրավելով կեղծված առարկաները և դրոշմները:

204. Վաշխառության, այսինքն պարտք տրված դրամի կամ գույքի համար օրենքով թույլատրված չափից ավելի տոկոս վերցնելու, ինչպես նայև որպես փոխառություն կամ օգտվելու նպատակով ուրիշին արտադրության գործիքներ, անասուններ կամ սերմացու տրամադրելու դեպքում դրա համար տվյալ վայրում ընդունված սովորական չափից ավելի բարձր վարձ վերցնելու համար կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով:

Նույն գործողությունների համար, եթե նրանք կատարվել են որպես արհեստ կամ շահագործելով ստացողի կարիքը կամ նեղ վիճակը (որակյալ վաշխառություն), կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև երկու տարի ժամանակով:



205. Շորթում կատարելու համար, այսինքն՝ երբ մեկը տուժողի անձի վերաբերմամբ բռնություն գործ դնելու, նրա մասին անվանարկող տեղեկություններ հրապարակելու կամ նրա գույքը ոչնչացնելու սպառնալիքի տակ պահանջում է իրեն տալ նյութական որևէ օգուտ կամ գույքային իրավունքներ և կամ գույքային բնույթի որևէ գործողություններ կատարել, կիրարկվում է—

ազատությունից զրկելը մինչև երեք տարի ժամանակով:

206. Մասնավոր անձանց պատկանող գույքը դիտավորյալ կերպով ոչնչացնելու կամ փչացնելու համար, կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

Նույն գործողությունների համար, եթե կատարվել են հրկիզման, հեղեղելու կամ հանրության համար վտանգավոր որևէ այլ եղանակով—

ազատությունից զրկելը մինչև հինգ տարի ժամանակով:

Նույն գործողությունների համար, եթե նրանց հետևանքով մարդկային զոհեր են եղել, կամ հասարակական աղետ է տեղի ունեցել,—

ազատությունից զրկելը մինչև տաս տարի ժամանակով:

207. Ծովի վրա նավերի ընդհարման դեպքում, եթե նրանցից մեկի նավապետը մյուս նավը փրկելու համար անհրաժեշտ միջոցներ չի ձեռնարկի, որ չափով այդ միջոցները կարող էին ձեռնարկվել, առանց լուրջ վտանգի ենթարկելու իր նավը, նավորդներին և ճանապարհորդներին՝ անկախ այն պատասխանատվությունից, որին նա ենթարկվում է վտանգի մեջ գտնվող նավի ճամբորդներին և նավորդներին օգնության չհասնելու համար (հոդ. 182), կիրարկվում են.—

ազատությունից զրկելը կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ տարի ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

208. Գյուտերի արտոնագրերի վերաբերյալ օրենքներով սահմանված կանոնների խախտմամբ ինքնագլուխ կերպով գյուտից օգտվելու, այլ և հեղինակի իրավունքի վերաբերյալ օրենքի խախտմամբ գրական, երաժշտական և այլ գեղարվեստական կամ գիտական երկերն ինքնագլուխ օգտագործելու համար, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև երեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև մեկ հազար ռուբլի:

209. Անբարեխիղճ մրցության նպատակով ուրիշին պատկանող ապրանքից, գործարանի կամ արհեստի նշանից, նկարից, կաղապարից, ինչպես նայև ուրիշի ֆիրմայից կամ ուրիշի անունից և կոչումից ինքնագլուխ կերպով օգտվելու համար, կիրարկվում են—

հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև երեք հազար ռուբլի:

## ԳԼՈՒԽ 9

# ԺՈՂՈՎՐԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ, ՀԱՆՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԿԱՐԳԸ ՊԱՀՊԱՆՈՂ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄ

210. Խիստ—ներգործող նյութեր պատրաստելու, պահելու և վաճառելու համար, երբ կատարվել է այդ տեսակ հատուկ թույլտվություն չունեցող անձի ձեռքով, կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև մեկ հազար ռուբլի:

211. Որպես արհեստ բժշկությամբ պարապելու համար այնպիսի անձանց կողմից, որոնք պատշաճ կարգով հաստատված բժշկական կրթություն չեն ստացել, այլ և բժշկական աշխատավորի կողմից բժշկական այնպիսի գործունեությամբ զբաղվելու համար, որի իրավունքը նա չունի, կիրառվում են—

Հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

212. Համաճարակների դեմ պայքարելու նպատակով ժողովրդի առողջության վերաբերյալ հատկապես հրատարակված կանոնները խախտելու համար կիրառվում են—

Հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև հինգ հարյուր ռուբլի:

213. Մալարիայի դեմ պայքարելու նպատակով սահմանված կանոնները խախտելու համար կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ՝ մինչև երկու ամիս ժամանակով կամ տուգանք մինչև երեք հարյուր ռուբլի:

214. Առանց պատշաճ թույլտվության պայթուցիկ նյութեր, ռումբեր և հրազեններ (ոչ որսորդական) պատրաստելու, պահելու, գնելու և վաճառելու համար կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև մեկ հազար ռուբլի, բոլոր դեպքերում գրավելով վերոհիշյալ նյութերը, ռումբերը և զենքերը:

214.—ա. ԽՍՀ Միության փոստային, հեռագրային, հեռախոսային և ռադիո կապի կանոնադրությամբ արգելված պայթուցիկ ու դյուրավառ նյութերն ու առարկաները, ինչպես նաև ուրիշ թթվուտները և ուրիշ այլ նյութեր փոստով առաքելու համար, բացի հիշյալ կանոնադրությամբ նախատեսված՝ փոստային ծրարը բռնագրավելուց, կիրառվում են.—

Հարկադիր աշխատանքներ մինչև վեց ամիս ժամանակով կամ տուգանք մինչև 1000 ռուբլի:

215. Մասնավոր շրջանառությունից հանված զինվորական հանդերձանք, ինքնաթիռ ապարատներ, հեռագրական ու ռադիո—հեռագրական գույք և վոչնչացված արժեթղթեր առանց պատշաճ թույլտվության պահելու համար կիրառվում են.—



սոցիալական պաշտպանության նույն միջոցները վերոհիշյալ առարկաների անպայման գրավմամբ:

216. ԽՍՀ Միության «Լենինի շքանշան»—«Կարմիր դրոշ» «Աշխատանքի կարմիր դրոշ» և «Կարմիր աստղ» շքանշանները, այլ և Կարմիր Խաչի ու Կարմիր Մահիկի նշաններն այնպիսի անձանց կողմից կրելու համար, որոնք այդ իրավունքը չունեն, կիրարկվում են—

Հարկադիր աշխատանքներ մինչև երեք ամիս ժամանակով, կամ տուգանք մինչև երեք հարյուր ռուբլի, վերոհիշյալ շքանշանների և նշանների անպայման գրավմամբ:

217. Եթե նավապետը չի հայտնի մյուս նավին, որի հետ ընդհարվել է ծովի վրա, իր նավի անունը և վոր նավահանգստին պատկանելը, նաև այն վայրի անունը, ուր գնալու յե նավը, չնայած վոր նա կարող եր այդ տեղեկությունները հայտնել, կիրարկվում են

Հարկադիր աշխատանքներ մինչև երեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև երեք հարյուր ռուբլի:

218. Տպագրական յերկերը լույս ընծայելու կամ բազմացնելու, այլ և ֆոտո—կինոյի վերաբերյալ սահմանված գրաքննության կանոնները խախտելու համար կիրարկվում են—

Հարկադիր աշխատանքներ մինչև երեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև երեք հարյուր ռուբլի:

219. Դրոշմատուրքի յենթակա փաստաթղթեր և գործավարական թղթեր, ինչպես նայև առևտրական մատյաններ պահելու վերաբերյալ կանոնները խախտելու, այլ և դրոշմատուրքի վերաբերմամբ կատարվող վերստուգման ժամանակ պաշտոնատար անձանց փաստաթղթեր, թղթեր և մատյաններ չներկայացնելու համար կիրարկվում են.—

Հարկադիր աշխատանքներ մինչև երեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև երեք հարյուր ռուբլի:

220. Առևտրա—արդյունաբերական, բնակարանային և այլ ընկերություններ ու միություններ տոմարագրելու ժամանակ պետական հիմնարկություններին կամ պաշտոնատար անձանց տրվող՝ օրենքով սահմանված ձևի հայտարարությունների մեջ ակնհայտնի սուտ տեղեկություններ ցույց տալու համար կիրարկվում են—

Հարկադիր աշխատանքներ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

Հրապարակական հաշվետվության կանոնները խախտելու համար—

սոցիալական պաշտպանության նույն միջոցները:

221. Տոմարագրության, հաշվառման և պետական պահեստարաններին հանձնելու յենթակա հնության և արվեստի հավաքածուներ և հուշարձաններ թաքցնելու համար կիրարկվում են—

Հարկադիր աշխատանքներ մինչև երեք ամիս ժամանակով, թաքցրած գույքի գրավմամբ:

222. Մեքենական շարժիչներ սարքելու վերաբերյալ կանոնները խախտելու համար կիրարկվում են—

հարկադիր աշխատանքներ մինչև յերեք ամիս ժամանակով կամ տուգանք մինչև յերեք հարյուր ռուբլի:

223. Տպարաններ և վիմագրատներ և նման ձեռնարկություններ բանալու և շահագործելու վերաբերյալ կանոնները խախտելու համար կիրարկվում են—

սոցիալական պաշտպանության նույն միջոցները:

224. Մասնավոր ռադիո-կայաններից ոգտվելու համար վոչ այն նպատակով, վորի համար թույլտվություն է տրված, կամ այդ թույլտվության կանոնները խախտելու և կամ Փոստի ու Հեռագրի Ժողովրդական Կոմիսարիատի վերահսկողության կանոնները խախտելու համար կիրարկվում է—

տուգանք վոչ ավելի, քան ոգտագործման համար վճարվող կամ նշանակված տարեկան վարձավճարի հնգապատիկ չափով:

Առանց պատշաճ թույլտվության կամ առանց պատշաճ տոմարագրության և կամ առանց սահմանված վարձը (աբոնեմենտ) վճարելու կայան կառուցելու համար կիրարկվում է.—

վարչական կարգով տրվող տուգանք նույն չափով:

225. Տեղական իշխանության մարմինների պարտադիր վորոշումները խախտելու համար, վորչափ այդ վորոշումները հրատարակված են որենքով վորոշված իրավասության սահմաններում, այլ և առանձին գերատեսչությունների կողմից՝ որենսդիր մարմինների լիազորությամբ հրատարակվող վորոշումները, հրամանները և հրահանգները խախտելու համար, յեթե նրանց մեջ հատկապես հիշատակված է վարչական կարգով պատասխանատվության յենթարկելու իրավունքը, կիրարկվում են.—

նախազգուշացում կամ հարկադիր աշխատանքներ մինչև մեկ ամիս ժամանակով և կամ վարչական կարգով դրվող տուգանք մինչև հարյուր ռուբլի:

## ԳԼՈՒԽ 10

## ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՆՑԱՆՔՆԵՐ

Ընդունված է ԽՍՀՄ կենտգործկոմի և ժողկոմխորհի 1927 թ. հուլիսի 27-ի վորոշմամբ (Որ. Ժող. 1927 թ. № 50, հոդ. 504 և 505 և մտցված է ՀՍԽՀ Քր. Որ. մեջ, վորպես նրա բաղկացուցիչ մասը:

226. Զինվորական հանցանք են համարվում Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի զինվորական ծառայողների, ինչպես նաև պատերազմի ժամանակ թիկունքի ու ճակատի սպասարկության համար կազմակերպվող հատուկ խմբերում գտնվող քաղաքացիների այն հանցանքները, վորոնք ուղղված են զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ:

Զինվորական հանցանք են համարվում պետական նշանակություն ունեցող ձեռնարկությունների ու կառուցումների ռազմականացված



պահպանության և ռազմականացված հրշեհային պահպանության շարային ու վարչատնտեսական կազմի աշխատողների, նաև Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի գործառնական-շարային և վարչա-տնտեսական կազմի աշխատակիցների այն հանցանքները, վորոնք ուղղված են ծառայության սահմանված կարգի դեմ:

227. ա) Ծառայության կարգով տրված հրամանը չկատարելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով:

բ) Նույն արարքի համար հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում են.—

Բանվորա-Գյուղացիական Կարմիր բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

գ) Նույն արարքի համար, յեթե կատարված է մի խումբ անձանց կողմից կամ մարտի պարագաներում, կամ ծանր հետևանքներ է ունեցել, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մի տարուց վոչ պակաս ժամանակով:

դ) Նույն արարքի համար, յեթե կատարված է մարտի պարագաներում և մարտական գործողությունների համար վնասակար հետևանքներ է ունեցել, կիրարկվում է.—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը:

228. ա) Զինվորական ծառայության գծով իր վրա դրված պարտականությունները կատարող անձին դիմադրություն ցույց տալու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

բ) Նույն արարքի համար, յեթե կատարված է մի խումբ անձանց կողմից, կամ տեղի յե ունեցել բռնությամբ կամ զենք գործածելով, կամ կատարվել է մարտի պարագաներում, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով:

գ) Այս հոդվածի «բ» կետով նախատեսված արարքի համար հանցանքը ծանրացնող հանգամանքներում կիրարկվում է.—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը:

229. ա) Զինվորական ծառայության կարգով իր պարտականությունները կատարող անձին այդ պարտականությունները խախտելուն հարկադրելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով:

բ) Նույն արարքի համար, յեթե կատարված է մի խումբ անձանց կողմից, կամ տեղի յե ունեցել բռնությամբ կամ զենք գործածելով, կամ կատարվել է մարտի պարագաներում կիրարկվում է.—

ազատությունից զրկելը հինգ տարուց վոչ պակաս ժամանակով:

գ) Այս հոդվածի «բ» կետով նախատեսված արարքի համար ծանրացնող հանգամանքներում կիրարկվում է.—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը:

230. ա) Ստորադրյալի կողմից իր պետի կամ կրտսեր զինվորականի կողմից ավագ զինվորականին բռնի գործողությամբ վիրավորանք հասցնելու համար, յեթե այդ տեղի յե ունեցել՝ նրանցից թեկուզ մեկի կողմից իր զինվորական ծառայության պարտականությունները կատարելու ժամանակ, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը վեց ամսից ոչ պակաս ժամանակով:

բ) Նույն պայմաններում խոսքով կամ ոչ բռնի գործողությամբ վիրավորանք հասցնելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև վեց ամիս ժամանակով:

գ) Այս հոդվածի «բ» կետով նախատեսված արարքի համար՝ հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում են.—

Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

դ) Նույն արարքի համար, յեթե միևնույն պայմաններում կատարել է պետը իր ստորադրյալի կամ ավագ զինվորականը կրտսեր զինվորականի նկատմամբ, պատասխանատվությունն է սահմանվում նույն հիմունքներով:

231. ա) Այն դեպքում, յերբ վիրավորանք հասցնողն ու վիրավորանք կրողը պատկանում են 226 հոդվածում հիշատակված անձանց թվին, սակայն փոխադարձաբար ստորադրության կամ ավագության հարաբերության մեջ չեն գտնվում, և յերբ այդ դեպքում նրանցից թեկուզ մեկը կատարելիս է յեղել իր՝ զինվորական ծառայության պարտականությունները, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով:

բ) Նույն արարքի համար՝ հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում են.—

Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

232. ա) Զորամասը կամ ծառայության վայրը ինքնագլուխ կերպով թողնելու համար, յերբ բացակայությունը վեց որից ավելի տևել, իսկ նավատորմի կամպանիաների, զորաշարժերի, վարժական կարճատև կրկնողական և ստուգման հավաքների դեպքում՝ յերկու որից ավելի, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով:

բ) Զորամասը կամ ծառայության վայրը՝ զինվորական ծառայության պարտականություններից յերկար ժամանակով կամ ընդմիշտ խուսափելու դիտավորությամբ ինքնագլուխ թողնելու համար, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

գ) Այս հոդվածի «ա» և «բ» կետերում նախատեսված արարքների համար, յերկրորդ անգամ կամ յերկու անգամից ավելի կրկնվելու դեպքում, ինչպես նաև՝ յեթե կատարված է պատերազմի ժամանակ, թեկուզ առաջին անգամ, կիրարկվում է.—



ազատությունից զրկելը յերկու տարուց ոչ պակաս ժամանակով, գույքի գրավմամբ կամ առանց դրան:

դ) Այս հոդվածի «ա» և «բ» կետերում նախատեսված արարքների համար, յեթե կատարված են պատերազմի ժամանակ, հանցանքը ծանրացնող հանգամանքներում, կիրարկվում է.—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը, գույքի գրավմամբ:

ե) Այս հոդվածի «ա» և «բ» կետերում նախատեսված արարքների համար, յեթե կատարված են գերակետ ծառայության պետերի միջին, ավագ, բարձր և կրտսեր կազմին պատկանող անձանց կողմից, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը յերկու տարուց ոչ պակաս ժամանակով, գույքի գրավմամբ կամ առանց դրան, իսկ պատերազմի ժամանակ—սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը, գույքի գրավմամբ:

զ) Այս հոդվածի «ա» կետով նախատեսված արարքի համար, յեթե կատարված է խաղաղ ժամանակ, թեկուզ պետերի կազմի մեջ մտնող անձի կողմից, հանցանքն առանձնապես մեղմացնող հանգամանքներում, և յեթե ինքնագլուխ բացակայությունը տասնյերկու (4) որից ավելի չի տևել, կիրարկվում են.—

Բանվորա-գյուղացիական Կարմիր բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

233. ա) Զորամասը կամ ծառայության վայրն առանց զինվորական ծառայության պարտականություններից ընդմիշտ խուսափելու դիտավորության ինքնագլուխ թողնելու համար, յեթե բացակայությունը վեց (2) որից ավելի չի տևել, սակայն կրկնվել է սիստեմատիկ կերպով, կիրարկվում են—

232-րդ հոդվ. «գ» և «դ» նախատեսված՝ սոցիալական պաշտպանության միջոցները:

բ) Նույն արարքի համար, յեթե կատարված է գերակետ ծառայության պետերի միջին, ավագ, բարձր և կրտսեր կազմին պատկանող անձանց կողմից, կիրարկվում են.—

232-րդ հոդ. «ե» կետով նախատեսված սոցիալական պաշտպանության միջոցները:

232. հոդ. «գ» կետով նախատեսված սոցիալական պաշտպանության միջոցը կիրարկվում է—այս հոդվածի «ա» կետով նախատեսված արարքի համար կրկնաբար դատված լինելու դեպքում, ինչպես նաև նույն արարքի համար առաջին անգամ դատված լինելու դեպքում, յեթե արարքը կատարված է պատերազմի ժամանակ կամ 232 հոդ. «ա», «բ» և «գ» կետերում նախատեսված հանցանքների համար դատվելուց հետո:

234 ա) Մարտի պարագաներում զորամասը կամ ծառայության վայրն ինքնագլուխ թողնելու համար կիրարկվում է.—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը, գույքի գրավմամբ:

բ) Նույն արարքի համար հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում է.—

ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով, գույքի գրավմամբ կամ առանց դրան:

235. Նշանակվելիս, փոխադրվելիս, գործուղումից, ինչպես նաև արձակուրդից առանց հարգելի պատճառի վորոշված ժամանակին ծառայության չներկայանալու համար սահմանվում է.—

232, 233 և 234-րդ հոդվածներով վորոշված պատասխանատվությունը:

Զինվորական ծառայողների և պահեստում գտնվող զինվորականների կողմից վարժական հավաքներին, մանյովրաներին ու այլ վարժական պարապմունքներին, փորձնական մոբիլիզացիայի զորակոչներին առանց հարգելի պատճառի վորոշված ժամանակին ծառայության չներկայանալու համար սահմանվում է.—

պատասխանատվություն նույն հիմունքներով:

235. ա) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում ծառայելու մասին մոբիլիզացիայի զորակոչից և պատերազմական ժամանակի կարգով նույն բանակը համալրելու մասին հետագա զորակոչներից խուսափելու դեպքում կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով, իսկ հրամանատարական անձանց նկատմամբ յերկու տարուց վոչ պակաս ժամանակով, ամբողջ գույքի կամ նրա մի մասի գրավմամբ, բարձրացնելով հանցանքը ծանրացնող հանգամանքներում մինչև սոցիալական պաշտպանության առավելագույն չափը՝ գնդակահարություն, ամբողջ գույքի գրավմամբ:

236. ա) Բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի յերկրային հեծյալ զորամասերի փոփոխական կազմին պատկանող զինվորական ծառայողների կողմից հիշյալ մասերին հատկացված սեփական ձիերը բերելու պարտականությունները չկատարելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև վեց ամիս ժամանակով:

բ) Նույն արարքի համար հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում են.—

Բանվորագյուղացիական Կարմիր բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

237. ա) Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց իրեն վորևե վնասվածք պատճառելու, հիվանդ ձևանալու կամ փաստաթղթեր կեղծելու կամ վորևե այլ խաբեբայության միջոցով խուսափելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:



բ) Նույն արարքի համար, յեթե կատարված է պատերազմի ժամանակ, կամ մարտի պարագաներում, կիրարկվում է.—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը՝ գույքի գրավմամբ:

գ) Այս հոդվածի «բ» կետով նախատեսված արարքի համար՝ հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում է.—

ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով, գույքի գրավմամբ:

238. Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց խուսափելու համար, մասնավորապես կրոնական կամ այլ հանգամանքների պատրվակով, այս կանոնագրքի մյուս հոդվածներով նախատեսված հանցանքների նշանների բացակայության դեպքում, կիրարկվում են.—

227-րդ հոդ. նախատեսված սոցիալական պաշտպանության միջոցները:

239. ա) Ժամանակավոր կամ մշտական օգտագործման համար տրված պետական զգեստը և հանդերձանքը հակաօրինական յեղանակով ոտարելու, գրավ դնելու, կամ օգտագործման համար ուրիշին տալու (վաճառելու), դիտավորյալ փչացնելու կամ վնասելու և այդ իրերի պահպանության կանոնները խախտելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով:

բ) Նույն արարքի համար՝ հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում են.—

Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

գ) Նույն արարքների համար, յեթե կատարված են ծառայության գործածության համար տրված սառը զենքի կամ հրազենի, փամփուշտների և փոխադրության միջոցների վերաբերմամբ, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

դ) Այս հոդվածի «ա» կետով նախատեսված արարքի համար, յեթե կատարված է պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչպակաս ժամանակով:

ե) Այս հոդվածի «գ» կետով նախատեսված արարքի համար, յեթե կատարված է պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կիրարկվում է.—

ազատությունից զրկելը կամ առանց դրան յերեք տարուց վոչ պակաս ժամանակով, իսկ հանցանքը ծանրացնող հանգամանքներում—սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը:

Ծանոթություն.—Այն անձինք, վորոնք կընդունեն այս

հոդվածում հիշված՝ նրանց համար անհրաժեշտ պարենաբաժ-տարվող, դրամ գրվող կամ ի պահպանություն օգտագործության տրվող առարկաները, ենթակա յեն պատասխանատվության, վորպես մեղսակիցներ:

240. ա) Պահակային կամ ուղեկցորդային (конвойная) ծառայության կանոնագրքի կանոնները և ի զարգացումն այդ կանոնների հրատարակված կարգադրությունները խախտելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև վեց ամիս ժամանակով:

բ) Նույն արարքի համար, հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում են.—

Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

գ) Զենքի, հրազենի պաշարների և պայթուցիկ նյութերի պահեստներին կից պահակներում, ինչպես նաև առանձնապես կարևոր պետական կամ ռազմական նշանակություն ունեցող այլ պայմաններում պահակային ծառայության վերաբերյալ կանոնագրքի կանոնները խախտելու համար կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

դ) Պահակային կամ ուղեկցորդային ծառայության հիմնական կանոնները խախտելու համար, յեթե առաջացել են այն վնասակար հետևանքները, վորը կանխելու համար սահմանված է տվյալ պահակը կամ ուղեկցորդը, կիրարկվում է —

ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով:

ե) Այս հոդվածի «գ» և «դ» կետերով նախատեսված արարքների համար, յեթե կատարված են մարտի պարագաներում, կիրարկվում է —

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով, իսկ հանցանքը ծանրացնող հանգամանքներում— սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը:

241. ա. Զորամասի որս կամ վերամարզի (բացի պահակից) մեջ մտնող անձի կողմից ներքին (պահային) ծառայության կանոնները խախտելու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև վեց ամիս ժամանակով:

բ) Նույն արարքի համար հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում են —

Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

գ) Նույն արարքի համար, յեթե առաջացել են այն վնասակար հետևանքները, վորը կանխելը տվյալ անձի պարտականությունների մեջ եր մտնում, կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև յերկու տարի ժամանակով:

դ) Նույն արարքի համար, յեթե կատարված է պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում, կիրարկվում է —



ազատությունից զրկելը մի տարուց վոչ պակաս ժամանակով:

ե) Նախորդ հոդվածի «դ» կետով նախատեսված արարքի համար՝ հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում է.—

ազատությունից զրկելը խիստ մեկուսացմամբ կամ առանց դրան մինչև յերեք տարի ժամանակով:

242 ա) Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի պետերի կազմին պատկանող անձի կողմից իշխանությունն ի չարը գործ դնելու, իշխանազանցության, անգործության, այլև ծառայության անփույթ վերաբերվելու համար, յեթե այդ արարքները կատարվել են սիստեմատիկ կերպով, կամ շահադիտական կամ անձնական շահագրգռվածության այլ նկատառումներով, ինչպես նաև այն դեպքում, յերբ այդ արարքներն առաջացրել են տվյալ անձին հանձնված ուժերի կամ նրան հանձնարարված գործի քայքայումը, կամ ռազմական գաղտնիքները հրապարակ հանելը, կամ այլ ծանր հետևանքներ, կամ թեկուզ հիշյալ հետևանքները չեն առաջացել, սակայն անհրաժեշտ կարող եյին առաջացնել կամ կատարվել են պատերազմի ժամանակ կամ մարտի պարագաներում կիրարկվում են.—

ազատությունից զրկելը խիստ մեկուսացմամբ կամ առանց դրան վեց ամսից վոչ պակաս ժամանակով:

բ) Նույն արարքի համար, հանցանքն առանձնապես ծանրացնող հանգամանքներում կիրարկվում է.—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը:

գ) Նույն արարքների համար՝ այս հոդվածի «ա» և «բ» կետերով նախատեսված նշանների բացակայության դեպքում կիրարկվում են —

Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

243. ա) Զինվորական պետի այն գործողություններն ու կարգադրությունները, վորոնցով իր ստորադրյալ զինվորական ծառայողների (կամ նրանց ընտանիքների) առաջ խոչընդոտ են հարուցվում Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների համար սահմանված արտոնություններն ու առավելությունները վայելելու, կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով:

բ) Նույն արարքի համար՝ հանցանքը մեղմացնող հանգամանքներում կիրարկվում են. —

Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

գ) Նույն արարքների համար, յեթե կատարվում են սիստեմատիկ կերպով կամ շահադիտական կամ անձնական շահագրգռվածության այլ նկատառումներով, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը մինչև վեց ամիս ժամանակով:

244. Զինվորական պետի կողմից իր ստորադրյալ զինվորական

ծառայողին հակաօրինական կերպով իր — պետի, նրա ընտանիքի կամ այլ անձանց անձնական կարիքներին ծառայեցնելու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև վեց ամիս ժամանակով:

245. ա) Զինվորական պետի կողմից իրեն հանձնված ռազմական ուժերը թշնամուն հանձնելու, իրեն հանձնված ամրությունները, ռազմանավերը, ռազմաօդային ապարատները, հրետանին ռազմական պահեստներն ու պատերազմ վարելու այլ միջոցները թշնամուն թողնելու, վոչնչացնելու կամ անպետքացնելու համար, ինչպես նաև յեթե զինվորական պետը համապատասխան միջոցներ չի ձեռք առնում վոչնչացնելու կամ անպետքացնելու պատերազմ վարելու այդ միջոցներն այն դեպքում, յերբ թշնամու կողմից գրավելու անմիջական վտանգ է սպառնում, և արդեն սպառված են նրանց պահպանության բոլոր միջոցները, յեթե այս հոդվածում մասնանշված գործողությունները կատարված են թշնամուն աջակցելու նպատակով, կիրարկվում է.—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը գույքի գրավմամբ:

բ) Նույն գործողությունների համար, յեթե կատարված են առանց թշնամուն աջակցելու դիտավորության, սակայն ռազմական կանոններին հակառակ, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով, իսկ հանցանքը ծանրացնող հանգամանքներում—սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը գույքի գրավմամբ:

246. ա) Զինվորական պետի կողմից՝ մարտի համար նրան տրված կարգադրությունից թշնամուն աջակցելու նպատակով ինքնագլուխ շեղվելու համար, կիրարկվում է —

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը, գույքի գրավմամբ.

բ) Նույն արարքի համար, յեթե կատարված է առանց թշնամուն աջակցելու դիտավորության, սակայն ռազմական կանոններին հակառակ, կիրարկվում է.—

ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով, իսկ հանցանքն առանձնապես ծանրացնող հանգամանքներում—սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը:

247. Մարտի ժամանակ պատերազմի դաշտն ինքնագլուխ թողնելու, առանց մարտի պարագաներից ստիպված լինելու՝ գերի ընկնելու կամ մարտի ժամանակ զենքով գործելուց հրաժարվելու, ինչպես նաև թշնամու կողմն անցնելու համար, կիրարկվում է —

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը գույքի գրավմամբ:

248. Խորտակվող ռազմանավի հրամանատարի կողմից առանց



իր ծառայության պարտականությունները մինչև վերջը կատարելու, ինչպես նաև ռազմանավի զորախմբի կողմից առանց հրամանատարից համապատասխան հրաման ստանալու ռազմանավը թողնելու համար, կիրարկվում է.—

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը:

249. ԽՍՀ Միության զինված ուժերի և պաշտպանունակության մասին ոտար կառավարություններին, թշնամու բանակներին և հակահեղափոխական կազմակերպություններին տեղեկություններ հաղորդելու, ինչպես նաև հաղորդելու նպատակով այդ տեղեկությունները հափշտակելու կամ հավաքելու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը հինգ տարուց վոչ պակաս ժամանակով, գույքի գրավմամբ կամ առանց դրան, իսկ այն դեպքերում, յերբ լրտեսությունն ունեցել է կամ կարող էր ունենալ ԽՍՀ Միության շահերի տեսակետից առանձնապես ծանր հետևանքներ — սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը գույքի գրավմամբ:

250. ա) ԽՍՀ Միության զինված ուժերի և պաշտպանունակության վերաբերյալ այնպիսի տեղեկություններ հաղորդելու համար, վորոնք համարվում են հատկապես պահվող գաղտնիք (ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1926 թ. ապրիլի 27—ի վորոշման 1—6 հոդվածներ ԽՍՀ Միության Օր. Ժող. 1926 թ. №32, հոդ. 213), կիրարկվում է —

ազատությունից զրկելը մեկ տարուց վոչ պակաս ժամանակով:

բ) Նույն արարքի համար, յեթե ունեցել է կամ ակնհայտնի կարող էր ունենալ առանձնապես ծանր հետևանքներ, կիրարկվում է —

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը գույքի գրավմամբ:

գ) Ռազմական այնպիսի տեղեկություններ հրապարակ հանելու համար, վորոնք հրապարակման յենթակա չեն սակայն հատկապես պահվող գաղտնիք չեն համարվում, կիրարկվում է —

ազատությունից զրկելը, մինչև մեկ տարի ժամանակով:

դ) Այս հոդվածի «գ» կետով նախատեսված արարքի համար՝ հանցանքը մեղմացնելու հանգամանքներում կիրարկվում են—

բանվորագյուղացիական Կարմիր Բանակի կարգապահական կանոնագրքի կանոնները:

251. Պատերազմի ժամանակ թշնամու բանակի կազմին պատկանող կամ թշնամու յերկրում կամ թշնամու զորքով գրավված վայրում բնակվող անձանց հետ գրագրություն կամ այլ յեղանակով հարաբերություն ունենալու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով:

252. ա) Կռվի դաշտում սպանվածների ու վիրավորների մոտ գտնված իրերը հափշտակելու համար (դիակապտություն) կիրարկվում է—

ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով։

բ) Նույն արարքի համար՝ հանցանքը ծանրացնող հանգամանքներում կիրարկվում է —

սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը գույքի զրավմամբ։

253. Պատերազմական գործողությունների շրջանում բնակչության վերաբերմամբ ավազակություն, ավարառություն և բռնություն գործ դնելը, նրա գույքն ապօրինաբար փչացնելը, ինչպես նաև ռազմական անհրաժեշտության պատրվակով ապօրինաբար զրավելու համար, կիրարկվում է —

ազատությունից զրկելը յերեք տարուց վոչ պակաս ժամանակով, գույքի զրավմամբ կամ առանց դրան, իսկ հանցանքը ծանրացնող հանգամանքներում սոցիալական պաշտպանության առավելագույն միջոցը գույքի զրավմամբ։

254. ա) Գերիների հետ վատ վարվելու համար, յերբ այդ մի քանի անգամ է տեղի ունենում, կամ զուգորդվում է հիվանդների ու վիրավորների դեմ ուղղված առանձին դաժանության հետ, ինչպես նաև հիվանդների ու վիրավորների նկատմամբ իրենց պարտականությունները անփույթ կերպով կատարելու համար այն անձանց կողմից, վորոնց վրա յե դրված նրանց բժշկելու ու խնամելու պարտականությունը, կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև յերեք տարի ժամանակով։

բ) Գերիների հետ վատ վերաբերվելու համար՝ հանցանքը ծանրացնող վերոհիշյալ հանգամանքների բացակայության դեպքում կիրարկվում են —

Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի կարգապահական կանոնադրքի կանոնները։

255. Պատերազմական գործողությունների շրջանում պատշաճ իրավունք չունեցող անձանց կողմից Կարմիր Խաչի կամ Կարմիր Մահիկի նշաններ կրելու համար, ինչպես նաև զինվորական պետի կողմից հիշյալ անձանց՝ այդ նշանները կրելու մասին կարգադրություն անելու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով։

256. Պատերազմի ժամանակ Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի դրոշակները կամ նշանները կամ սանիտարական բացահանության (եվակ.) փոխադրական միջոցների համար սահմանված հ[illegible] գույնն ի չարը գործ դնելու համար կիրարկվում է —

ազատությունից զրկելը մինչև մեկ տարի ժամանակով։

---

50

ՀՀ Ազգային գրադարան
NL0866628

ԳԻՆԸ 1 ռ.

193
11
26112